


Լ.Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ , Է.Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՄԻՋԱՏՆԵՐ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ

Լ.Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Է.Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՄԻԶԱՏՆԵՐ

Ուսումնական ծեռնարկ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2009

ՀՏԴ 595.7 (07)  
ԳՄԴ 28.691.89 ց7  
Վ 301

Դրատարակության է Երաշխավորել ԵՊՀ  
կենսաբանության ֆակուլտետի խորհուրդը

#### L.Կ.ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Է.Ս.

Վ 301 Միջատներ: (Ուսումնական ծեռնարկ): – Եր.: ԵՊՀ-ի  
հրատ., 2009 թ., 82 էջ:

Ուսումնական ծեռնարկում տրվում է միջատների կարգաբանությունը, արտաքին կառուցվածքը, բազմացման ու զարգացման առանձնահատկությունները: Ներկայացվում է, թե ինչպես պետք է միջատներ հավաքել և որոշել դրանց կարգերը: Տրվում են նաև միջատների կարգերի բնութագրերը:

Ուսումնական ծեռնարկը նախատեսված է կենսաբանական ուղղվածություն ունեցող ֆակուլտետների դասախոսների, ուսանողների, ուսուցիչների և բնասերների համար:

ԳՄԴ 28.691.89 ց7

ISBN 978-5-8084-1110-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.  
© L.Կ. Վարդանյան,  
Է.Ս. Եղիազարյան, 2009 թ.

Միջատների դասը պատկանում է հոդվածոտանիների (*Arthropoda*) տիպի տրախեավորների ենթատիպին (*Tracheata*): Ըստ ժամանակակից կարգաբանության՝ միջատների դասը բաժանվում է 30 կարգերի, որոնցից 4-ն ընդգրկված են անթև միջատների, իսկ 26-ը՝ թևավոր միջատների ենթադասերի մեջ: Այսպիսով՝ միջատների դասը բաժանվում է 2 ենթադասերի.

1. Անթև միջատներ (*Apterygota*)
2. Թևավոր միջատներ (*Pterygota*)

**Անթև միջատները** սաղմնաբանորեն անթև, պարզ կազմությամբ, նուրբ մարմնով, մանր, 1-3 մմ երկարություն ունեցող օրգանիզմներ են: Բերանային օրգանները ծածկված են կարգաբանական նշանակություն ունեցող հատուկ պատիճով, որի պատճառով կոչվում են **ծածկածնոտավորներ** (*Ectognatha*).

Ցնչող մեծամասնությունն ապրում է հողում, քարերի տակ, հին արմատների ճեղքերում, առանձին տեսակներ՝ պահեստներում և ջրում: Սնվում են քայլայվող օրգանական նյութերով: Ենթադասը բաժանաված է 4 կարգերի.

1. *Պրոտուրներ* (*Protura*)
2. *Պուապոչեր* (*Podura, Collembola*)
3. *Երկպոչավորներ* (*Diplura*)
4. *Խողանապոչավորներ* (*Thysanura*)

**Թևավոր միջատները** կազմավորման ավելի բարձր մակարդակ ունեցող, մեծամասամբ ամուր մարմնով ծևեր են: Բերանային մասերը բաց են, տեղավորված գլխի վրա, որի պատճառով էլ կոչվում են **բացծնոտավորներ** (*Ectognatha*): Ունեն զարգացած թևեր, սակայն որոշ ծևեր (*Երկրորդային, ոչ սաղմնաբանորեն*) դրանցից զուրկ են: Թևավոր միջատներն ապրում են գրեթե ամենուրեք՝ հողում, ջրում, բնակարաններում, բույսերի, վայրի, ընտանի կենդանիների և մարդու վրա: Սնվում են բույսերի բոլոր մասերով: Ցնչող մեծամասնությունը վնասատուներ են, սակայն կան նաև օգտակար տեսակներ:

Թևավոր միջատների ենթադասն ընդգրկում է 26 կարգեր, որոնք իրենց հերթին բաժանվում են 2 խմբի.

1. Դնաքևեր (*Paleoptera*)

2. Նորաքևեր (*Neoptera*)

Դնաքևերի մեջ մտնում են 2 կարգեր.

• 1. ճպուռներ (*Odonata*)

• 2. Միօրյակներ (*Ephemeroptera*)

Դնաքև միջատների թևերն ունեն պարզագույն կառուցվածք և ջղավորում, հանգիստ վիճակում չեն ծալվում մարմնի վրա (ծալվելիս ծգվում են դեպի վեր), ինչը բնորոշ է եղել հնագույն, անհետացած միջատներին (այստեղից էլ գալիս է սրանց անվանումը): Մնացած 24 կարգերը պատկանում են նորաքևերի խմբին, որոնց թևերը հանգիստ վիճակում ծալվում են մարմնի վրա (բացառությամբ ցերեկային թիթեռների):

Նորաքև միջատների կարգերն են՝


- 2 ✓ 1. Կիսակարծրաքևավորներ (*Heteroptera*)
- ✓ 2. Դավակարաքև կնճիքավորներ (*Homoptera*)
- 3. Բշտիկառուներ կամ տրիպսներ (*Trisanoptera*)
- 4. Էմբիներ (*Embiodea*)
- ✓ 5. Մաշկաթևավորներ կամ ականջմտուկներ (*Dermoptera*)
- ✓ 6. Կարծրաքևավորներ կամ բզեզներ (*Coleoptera*)
  - 7. Խավարասերներ (*Blattoptera*)
  - 8. Աղոքարարներ (*Mantoptera*)
  - 9. Զողիկանմաններ կամ ուրվականներ (*Plasmodaea*)
- ✓ 10. Թատկող ուղղաքևավորներ (*Orthoptera*)
- 11. Երկրամիններ կամ ճանճեր (*Diptera*)
- 12. Թեփուկաթևավորներ կամ թիթեռներ (*Lepidoptera*)
- 13. Մազաթևավորներ կամ առվակայիններ (*Trichoptera*)
- 14. Գարնանայիններ (*Plecoptera*)
- 15. Տերմիտներ (*Isoptera*)
- 16. Կարիճաճանճեր (*Mecoptera*)
- 17. Ցանցաթևավորներ (*Neuroptera*)
- 18. Մեծքամիններ կամ կախրամիններ (*Megaloptera*)
- 19. Ուղտիկներ (*Raphidioptera*)
- 20. Խոտհարներ (*Coryognatha*)
- ✓ 21. Թաղանքաթևավորներ (*Hymenoptera*)
- 22. Լվեր (*Aphaniptera*)

## 23. Փետրակերներ (*Mallophaga*)

## 24. Ողիլներ (*Anoplura*)

### ՄԻԶԱՏՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասուն միջատի մարմինը կազմված է 3 բաժիններից՝ գլխից, կրծքից և փորիկից (նկ.1):



Նկ. 1. Մորեխի մարմինը կողքից (ձախ թևերը հեռացրած).

- 1- գլուխ., 2- կուրծ., 3- փորիկ., 4- պարզ աչք, 5- ֆասետային աչք, 6- թեղ.,  
7- առաջնակուրծ., 8- լսողության օրգան, 9- տերգիտներ, 10- ստերիլիտներ, 11- թևեր,  
12- ձվադիր, 13- ցերկի, 14- շնչանցքներ, 15- կոնք, 16- կոնքազդրային դարձակ,  
17- ազդր, 18- սրունք, 19- թաթ, 20- խթաններ, 21- ճանկեր

**Գլխի** վրա տեղավորված են զույգ բարդ աչքեր, 3 պարզ աչքիկներ և զույգ միաճյուղ թեղեր (անտենաներ):

**Կրծքային բաժինը** կազմված է 3 հատվածներից, որոնցից յուրաքանչյուրը կրում է մեկ զույգ հատվածավոր ոտքեր: Բարձրակարգ թևավոր միջատների 2-րդ և 3-րդ հատվածների վրա տեղավորված են զույգ թևեր:


**Փորիկը** սովորաբար կազմված է 10 հատվածներից (դրանց թիվը կարող է տատանվել 6-12-ի սահմաններում), զուրկ է վերջույթներից: Եթի սեռական անցքը տեղավորված է փորիկի 8-րդ, իսկ արույնը՝ 9-րդ հատվածում (բացառությամբ երկապչիկների և բեղիկազուրկների): Երբեմն առկա են վերջույթների ծևափոխու-

բյուններ՝ **գրիֆելներ, ցերկիններ** կամ այլ օժանդակ օրգաններ՝ **ծվաղիր և խայթ:**

Սիջատների փորային և կրծքային բաժինների յուրաքանչյուր հատված կազմված է 4 թիթեղներից՝ մեկական **մեջքային (տերգիտ)** և **փորային (ստերնիտ)** և երկուական **կողքային (պլեյրիտ)**:

Սիջատների մարմինը պատված է **խիտինային կուտիկուլայով**, սակայն խիտինի շերտը մարմնի մակերեսին տարածված է անհամաշափ: Այսպես՝ տերգիտների և ստերնիտների կենտրոնում խիտինի շերտն ավելի շատ է, քան նույն թիթեղների եզրային մասում, որի հետևանքով դրանք ընդունում են փափուկ թաղանթի տեսք և իրար են միացնում հարևան հատվածները:

Խիտինային ծածկույթը հաճախ ունենում է մանր հավելվածներ՝ **մազեր, խոզաններ և փշեր:** Խիտինային այդ գոյացությունների ձևը, քանակը և տեղադրվածությունն ունի կարգաբանական նշանակություն: Երբեմն դրանք հանդես են գալիս որպես գունավորման գործոն:




Նկ. 2. Մորեխի գլուխը.

ա) տեսքը առօկից, բ) տեսքը կողքից

1- շոշափուկ, 2- ստորին ծնոտ (մաքսիլա), 3- պարզ աչիկներ, 4- բարդ աչք, 5-վերին ծնոտ (մանդիբուլա), 6- վերին շրթունք, 7- ենթակլան (հիպոֆարինցոս), 8-ստորին շրթունք, 9- բեղիկ, 10- ճակատ, 11- նախաճակատ, 12- քունք, 13- այտ

Գլուխը կազմված է **ակրոնից** և միաձուլված 4 հատվածներից, որոնք, պատված են խիստինային պատիճով (տուփիկով), որի առաջնային մասը կոչվում է **ճակատ**, իսկ ճակատի և վերին շրթունքի միջև եղած տարածությունը՝ **դիմակ**. Վերջինս սովորաբար ճակատից բաժանվում է գծով կամ ակոսով: Պատիճի վերին մասը **գագաթ** է: Ճակատից դեպի աջ և ձախ այտերն են, այտերից վերև՝ **քունքերը**: Գլխի ամենաետին մասը **ծոծրակն** է (նկ. 2):

Գլուխը կրում է 4 զույգ հավելվածքներ: **Բեղերը** կամ **անտեռաներն** ամրացած են գլխի առջևի մասին՝ ակրոնին, միշտ 1 զույգ են, հատվածավոր: Դրանց թիվը, երկարությունն ու ծեղ տարբեր են միջատների տարբեր տեսակների մոտ: **Բեղերն** ըստ ծեղի լինում են **թելանման**, **համրիչանման**, **սղոցանման**, **սանրակերպ**, **խոզանակերպ**, **փետրածկ**, **թրածկ**, **հովհարածկ**, **գնդասեղանման**, իլիկածն (նկ. 3):




Նկ. 3. Միջատների բեղերի ձևերը.

- 1- խոզանակերպ, 2- թելանման, 3- համրիչանման, 4- սղոցանման,
- 5- սանրակերպ, 6- գնդասեղանման, 7- գլխիկածկ, 8- իլիկածկ,
- 9- թիթեղագնդասեղածկ, 10- սանրիկածնկածկ, 11- անկանոն, 12- փետրածկ,
- 13 - խոզանակիր

Միջատների գլխային բաժնի մյուս 3 զույգ հավելվածները բերանային ապարատի մասերն են՝ ծնոտներն ու շրունքները, որոնց ձևափոխությունները միջատների տարբեր տեսակների մոտ առաջացնում են տարբեր ծեփի բերանային ապարատներ՝ կրծող կամ ծամող, կրծող-ծողող կամ ծամող-ծողող, ծողող, ծակող-ծողող:

Բերանային ապարատի հիմնական ծեփ կրծող տիպն է, որի տարբեր մասերի ձևափոխությունները, ըստ սնվելու եղանակի, առաջացրել են ձևաբանական տարբեր տիպեր:

**Կրծող կամ ծամող բերանային ապարատը բնորոշ է խավարասերներին, ուղղաթևավորներին, բզեզներին, ճպուռներին, թիթեռների թրթուրներին և այն միջատներին, որոնք սնվում են առավելապես կոշտ կերով (Ըկ.4):**



Ըկ. 4. Կրծող տիպի բերանային ապարատ.

1- վերին շրթունք, 2- վերին ծնոտ, 3-7- ստորին ծնոտ, 3- հիմնական հատված,

4- սյունիկ, 5- շոշափուկ, 6- արտաքին թիակ, 7- ներքին թիակ,

8-12- ստորին շրթունք, 8- ենթակզակ, 9- կզակ, 10- շոշափուկ,

11- արտաքին թիակ, 12- ներքին թիակ

**Կրծող կամ ծամող բերանային ապարատը կազմված է կենտ մեկ թիթեղանման վերին շրումքից, գոյց վերին ծնոտներից, գոյց հատվածավոր ստորին ծնոտներից և հատվածավոր մեկ կենտ ստորին շրումքից:**

**Վերին ծնոտները՝ մանդիբուլաները, հաստ խիտինային թիթեղներ են, հատվածավոր չեն, թիթեղի ներքին եզրը կրում է ատամներ, որոնք ծառայում են ամուր կերը կրծելու և մանրացնելու համար:**


**Ստորին ծնոտները՝ մաքսիլաները, կազմված են հիմնական նեղ հատվածից, որի վրա տեղադրված է սյունիկը՝ 3 հավելվածներով, 2 ոչ հատվածավոր ծամող թիակները՝ արտաքին ու ներքին և հինգհատվածանի ծնոտային շոշափուկը. Ներքին թիակների ծայրին գտնվում են մուգ գույնի խիտինային ատամներ, որոնք մասնակցում են կերի մանրացնանը: Արտաքին թիթեղները պատված են բազմաթիվ մազիկներով: Ենթադրվում է, որ արտաքին թիթեղը և ծնոտային շոշափուկը շոշափելիքի և համի գործառույթ են կատարում:**

**Ստորին շրթունքը կազմված է լայն, հիմնական թիթեղից՝ ենթակզակից և դրա վրա տեղադրված կզակից ու 3 գոյց հավելվածներից՝ գոյց արտաքին ու գոյց ներքին ծամող թիակներից և եռահատված շոշափուկից. Ստորին շրթունքի թիակները թույլ խիտինացված են և ծառայում են հեղուկ կերը լիգելու համար:**

**Կրծող-լիզող բերանային ապարատը (նկ.5), ի տարրերություն հիմնական տիպ հանդիսացող կրծող բերանային ապարատի, համեմատաբար քիչ է փոփոխվել, սակայն այն խիստ մասնագիտացված օրգան է, որը բնորոշ է հեղուկ կերով՝ նեկտարով սնվող բաղանթաթևավորների մեծամասնությանը (մեղու, իշամեղու):**

**Վերին շրթունքը թույլ է զարգացած, իրենից ներկայացնում է քիչ խիտինացված, լայն թիթեղի տեսք ունեցող մաշկային ծալք, որը պատված է բազմաթիվ մազիկներով: Վերին ծնոտները թույլ զարգացած, ոչ մեծ, խիտինացված թիթեղներ են: Դրանց ներքին մակերեսով անցնում է ակոս, իսկ ծնոտների եզրերի շվման տեղամասում կան լայն ելուստներ: Վերին ծնոտները ծառայում են ծաղկափոշին հավաքելու և մանրացնելու համար: Բացի դրանից, մեղուները մանրացնում են մոմը և կառուցում բջիջներ: Ստորին**

Ժնոտները խիստ ծգված են, յուրաքանչյուրը կազմված է փոքր հիմնական հատվածից և խիստ երկարացած զանգվածեղ բնից: Ստորին ժնոտի արտաքին թիակը թելանման է և երկարացած, ներքինն ապաճել է: Ստորին շոշափուկը նույնապես ապաճել է և փոքր, երկհատվածանի հավելվածի տեսք է ստացել:




ԾԿ.5. Մեղվի կրծող-լիզող բերանային  
ապարատը.

- 1- Վերին ջրբունք, 2- Վերին ժնոտ,
- 3-6 ստորին ժնոտ (3- հիմնական հատված  
4- սյունիկ 5- արտաքին թիակ 6- շոշոփուկ),
- 7-11 ստորին շրթունք (7- ենթակզակ  
8- կզակ 9- ներքին թիակներ՝ լեզվակ  
10- արտաքին թիակ 11- շոշափուկ )

Մեղվի ստորին շրթունքը բավականին բարդ կառուցվածք ունի: Այն կազմված է եռանկյունաձև ենթակզակից և հաստացած կզակից: Ստորին շրթունքի ներքին թիակները խիստ ծգված են և առաջացնում են խիտ մազիկներով պատված լեզվակ, որի ծայրին գտնվում է եռանկյունաձև գդալիկը: Լեզվակի միջով անցնում են երկու խողովակներ (ակոսներ): Արտաքին թիակներն ապաճել են և երկու հավելվածների տեսքով նատաշ են լեզվակի հիմքի աջ և ձախ կողմերում: Ստորին շրթնային չորսհատվածանի շոշափուկները լավ զարգացած են: Սրանք կորցրել են շոշափելիքի գործառույթը, վերածվել կնճիթի և ծառայում են որպես կեր ընդունելու օրգան:

Այսպիսով՝ կրծող-լիզող բերանային ապարատի աշխատող մասերը ստորին շրջունքը և ստորին ծնուտներն են, որոնք առաջացնում են արտաքին և ներքին "կնճիթներ": Արտաքինը կազմված է ստորին ծնուտների իրար սեղմված արտաքին թիակներից: "Կնճիթը" զանգվածեղ է և ժառայում է մոտ տարածության վրա մեծ քանակությամբ նեկտար ներծծելու համար: Լեզվակի մեջի երկու խողովակներից առաջինով՝ լեզվակի թքային խողովակով, թքագեղձերի արտազատուկը շարժվում է դեպի կնճիթի ծայրը, իսկ երկրորդ խողովակով, որն ունի ավելի մեծ ծավալ, ներքաշվում է դժվարամատչելի նեկտարանոցում գտնվող նեկտարը, և մեղուն գդալիկով լիզում է հեղուկի կաթիլը: Ենդուկ կերի ներծծումը տեղի է ունենում միջատի կլանի լայնացման և սեղմման միջոցով: Ներծծման ժամանակ լեզվակն արագորեն ետ ու առաջ է շարժվում՝ նպաստելով հեղուկի հոսքի արագացմանը:

**Ծակող-ծծող** տիպի բերանային ապարատի շնորհիվ միջատը ծակում է կենդանու ծածկույթները և ծծում արյունը: Բնորոշ է երկթևանիներին (արյունածուծ ընտանիքի մոծակներ, լվիճներ) և կիսակարծրաթևավորներին (նկ. 6):



Նկ. 6. Մոծակի ծակող-ծծող տիպի բերանային ապարատ.

- ա) մոծակի կնճիթը՝ ուղղված վիճակում,
  - բ) բերանային մասերի դիրքը՝ արյուն ծծելիս
- 1- վերին շրջունք,  
2- վերին ծնուտ,  
3 - ստորին ծնուտ,  
4 - ենթակլան  
(հիպոֆարինցու),  
5- ստորին շրջունք,  
6- ստորին ծնուտ  
շոշափուկ,  
7 - բեղիկներ


Այս տիպի բերանային ապարատը տարբերվում է մյուսներից խիստ երկարացած բերանային մասերով:

Ստորին շրթունքը պատված է մազիկներով, կորցրել է հատվածավորումն ու վերածվել ակոսի: Ծայրը երկատված է և կրում է զգայական մազիկներով պատված բլթակներ: Ի տարբերություն մյուս բերանային մասերի՝ իր վրա չի կրում շոշափուկներ:

Վերին շրթունքը վեր է ածվել բարակ, երկար խողովակի, որի ծայրը թեք կտրված է և սրացած: Դանգիստ վիճակում վերին շրթունքը տեղավորվում է ստորին շրթունքի ակոսում՝ առաջացնելով խողովակ: Խողովակի մեջ գտնվում են հինգ բարակ, ծակող խոզաններ, որոնցից չորսը գույգ վերին և գույգ ստորին ծնոտներն են, իսկ հինգերորդը՝ **ենթականն** է (հիպոֆարինքս), որը բերանային խոռոչի ստորին մակերեսի ելուստ է, և նրա միջով անցնում է **քրախողովակը**. Այս խոզանների ծայրերում գտնվում են մանր ատամիկներ:

Մոծակի բերանային ապարատի աշխատող մասերն են վերին շրթունքը և հինգ ծակող խոզանները, որոնք սեղմված են մեկը մյուսին և կազմում են ծակող ասեղ: Մաշկը ծակելու ժամանակ ստորին շրթունքն աղեղի պես կորանում է և մնում մաշկի մակերեսին: Դիպոֆարինքսի խողովակով թուրք անցնում է վերքի մեջ, իսկ ստորին շրթունքի խողովակով դեպի բերանային անցք բարձրանում է արյունը: Վերին շրթունքի խողովակը շատ բարակ է, այդ պատճառով ներծծմանը մասնակցում են մազանոթները:

**Ծողություն** բերանային ապարատը բնորոշ է թիթեռներին (նկ. 7): Դիմնական մասը՝ **ծողություն**, առաջացել է խիստ գերածած ստորին ծնոտների արտաքին թիակներից: Ներքին թիակներն ապաճել են: Յուրաքանչյուր արտաքին թիակ իրենից ներկայացնում է երկար ակոս: Մրանք իրար միացած են խիտինային կարթերով և առաջացնում են երկար խողովակ՝ **կնճիթ**. Դանգիստ վիճակում կնճիթը զապանակած ոլորված է և թաքնված գլխի տակ: Ծծելու գործողության ժամանակ կնճիթը ապապարութվում է և մտնում ծաղկի մեջ:



Ընդունակ բերանային ապարատ.

- 1- վերին շրթունք, 2- ստորին ծնուտներ՝ կնճիթ, 3- ստորին ծնուտ,
- 4- ստորին ծնուտի շոշափուկներ,
- 5- հիմնական անտենա,
- 6- ֆաստուային աչքեր

Բերանային ապարատի մնացած մասերը (վերին շրթունք, վերին ծնուտներ և ստորին շրթունք) ապահել են: Վերին շրթունքը և ծամիչները գրեթե չեն տարրերվում: Ստորին շրթունքը ոչ մեծ, չհատվածավորված թիթեղ է: Լավ զարգացած են միայն եռահատված շոշափուկները:

*Հիգող* տիպի բերանային ապարատը բնորոշ է երկնականիներից շատերին (նկ. 8):

Ապարատի հիմնական մասը զանգվածեղ ստորին շրթունքն է (կնճիթը), որն ավարտվում է երկու մեծ թիթեղային ելուստներով: Վերջիններս իրենց վրա կրում են բարդ կառուցվածք ունեցող ֆիլտրող ապարատ: Վերին ծնուտները և ստորին ծնուտների առաջին զույգն ապահել են, սակայն ծնուտային շոշափուկները պահպանվել են: Վերին շրթունքն ու հիպոֆարինքսը գտնվում են ստորին շրթունքի առաջնապատի ակոսում և նրա հետ միասին առաջացնում են խողովակ, որի միջով անցնում է հեղուկ կերը: Վերջինն նախնական գտման է ենթարկվում ստորին շրթունքների ելուստների թիթեղիկների միջոցով:



Նկ.8. ճանճի լիզող տիպի բերանային  
ապարատ.


- 1-ստորին ծնուտի շոշափուկ,
- 2-վերին շրթունք, 3-ենթակլան,
- 4-զոտող ապարատի խողովակներ,
- 5-բերանային անցք,
- 6-ստորին շրթունքի թիակներ,
- 7-ստորին շրթունք

**Միջատների կուրծքը** կազմված է 3 հատվածներից՝ **առաջ-նակրծքից, միջնակրծքից և հետնակրծքից**. Ամեն հատված կրում է զույգ ոտքեր, որի պատճառով միջատներին երբեմն անվանում են **վեցոտանիներ**.

**Ոտքերը**, որոնք մարմնին միանում են կոնքի միջոցով, կազմված են 5 մասից՝ **կոնք, կոնքազդրային դարձակ, ազդր, սրունք, բար**, որը վերջանում է **2 ծանկով**.

Ոտքերն ըստ ծկի և գործառույթի լինում են **վագող, լողացող, ցատկող, փորող, բռնող կամ գիշատիչ, կաշող, հավաքող կամ զամբյուղավոր** (նկ. 9):

**Վագող ոտքերի** մասերը զարգացած են համաչափ, սակայն նկատվում են աննշան տարբերություններ: Նման ոտքեր ունեն խավարասերները, ճպուները, ականջմտուկները, թիթեռները, բզեզները, կիսակարծրաթևավորները, թաղանթաթևավորների ճնշող մասը:



ԱԿ. 9. Ոտքերի ձևերը.

ա) վազող, բ) լողացող, գ) ցատկող, դ) փորող, ե) գիշատիչ,

զ) ծոռող, է) զամբյուղածն կամ հակաքող, ը) քայլող

1- կոնք, 2- կոնքազդրային դարձակ, 3- ազդր, 4- սրունք, 5- քար

**Լողացող ոտքերի** բոլոր մասերը տափակ են, կարծ և լայն: Թաթերի հատվածները պատված են խիտ և երկար մազերով, որոնք մեծացնում են ոտքի մակերեսը և հեշտացնում թիավարումը: Լողացող ոտքերը բնորոշ են քաղցրահամ ջրերում ապրող լողացող բգեզներին, կիսակարծրաթևավորներին:

**Ցատկող ոտքի** ազդրը և սրունքը երկար են, ազդրը բավականաչափ լայն է: Ցատկող ոտքերը բնորոշ են ուղղաթևավորներին (ծղրիդներ, ճռիկներ, մորեխներ), ցիկադներին, լվերին, տերևալվիկներին և որոշ կիսակարծրաթևավորների: Նշված բոլոր միջատների մոտ ցատկող են միայն երրորդ զույգ ոտքերը:

**Փորող ոտքերի** բոլոր մասերը կարծ են և լայն: Նման ոտքեր ունեն որոշ բգեզներ, ցիկադների թրթուրները, կրետների մի քանի

**տեսակներ:** Սակայն ամենացայտուն օրինակն արջուկներն են, որոնց մոտ փորող են առաջին գույգ ոտքերը:

**Բանող կամ գիշատիչ** են աղոթարարների առաջին գույգ ոտքերը: Այս տիպի ոտքի կոնքը շատ երկար է, ազդյա՞ն՝ երկար և տափակ: Ազդյի երկարությամբ անցնում է ակոս, որի երկու կողքերին կան խիտինե ատամիկներ: Մրունքը նեղ է և առջևի եզրում ևս կրում է խիտինե մանր ատամիկներ: Թաքի հատվածները նուրբ են և երկար (Ըկ. 21):

**Կայող ոտքերը** հատուկ են որոշ ջրային բզեզների արուներին: Բնորոշ առանձնահատկությունն այն է, որ թաքերի առաջին երեք հատվածները լայնացած են և ստորին կողմում կրում են կայող խողովակներ կամ թիթեղներ, որոնց թիվը և ծեր կայուն են տվյալ տեսակի համար:


**Դավարող կամ զամբյուղավոր ոտքեր** ունեն մեղուները և իշամեղուները: Ոտքերի այս ծեր ծաղկափոշին հավաքելու համար է: Աշխատավոր մեղվի սրունջները լայն են և ունեն երկայնական հարթ խորացում, որը եզրավորված է երկար մազիկներով: Ոտքի այդ մասը կոչվում է «զամբյուղ»: Թաքերի առաջին հատվածները երկար են ու լայն և առաջացնում են մազապատ «խոզանակ»:

**Միջատների ճնշող մեծամասնությունն ունի 2 գույգ թևեր,** առանձին տեսակներ՝ 1 գույգ, իսկ որոշ տեսակներ գուրկ են դրանցից: **Վերին գույգ թևերն** ամրացած են կրծքային բաժնի 2-րդ, իսկ **ստորին գույգը՝ 3-րդ հատվածին:**

Ըստ ծագման՝ թևերն իրենցից ներկայացնում են կողային պատի հզոր ծալք, որի պատճառով դրանք երկշերտ են և կազմված 2 ամուր սերտաճած թիթեղներից, որոնց միջև տեղավորված են **ջղերը.**

Ըստ կազմության և խիտինապատ լինելու աստիճանի՝ միջատների թևերը լինում են՝ **կարծրաքն, կիսակարծրաքն, կաշվենման, բաղամրանման, թեփուկապատ, ցանցավորև** այլն (Ըկ. 10):

**Կարծր** են բզեզների վերին գույգ թևերը, որոնք ուժեղ խիտինապատ են, կոշտ և գուրկ զղավորումից: Նման թևերը չեն թափահարվում, այսինքն՝ ակտիվ թռչող չեն, պաշտպանում են կատարում իրենց տակ գտնվող նուրբ թևերը (Ըկ. 10.1):



ՆԿ.10. Միջատների թևերի տիպերը.

- ա) քզեզներ՝ կարծր և թաղանթավորաց, բ) թեփուկաթավորներ՝ թեփուկանման, գ) ճպուռներ՝ ցանցավոր, դ) ուղղարձավորներ՝ կաշվենման,  
ե) կիսակարծրաթավորներ՝ կիսակարծր

**Կիսակարծր թևը** բնորոշ է փայտոջիլներին, որոնց հիմքային բաժինը կոչում է, իսկ մնացած մասը՝ թաղանթավոր և պարզ երևացող ջղավորությամբ (նկ.10 ե):

**Կաշվենման թևերը** միջին աստիճանի խիտինապատ են, նույր կաշվի կամ մագաղաթի տեսք ունեն: Այդպիսի թևերը հատուկ են մորեխներին և ականջմտուկներին (նկ.10 դ):

**Թաղանթանման թևերը** ունեն մեղուները, իշամեղուները, կրետները, որոնց 4 թևերն ել նույր են, մասամբ թափանցիկ՝ պարզ երևացող ջղավորումով (նկ.10. 2):

**Թեփուկապատ թևերը** թաղանթանման են, բայց դրանց 2 մակերեսն ել պատված է խիտինային ծագում ունեցող տարրեր ծնի և

գույնի թեփուկներով ու մազիկներով: Այդպիսի թևերը հատուկ են թիթեռներին (նկ.10 բ):

Միջատների մոտ տարբեր են նաև թևերի ջղավորման տիպերը, որոնք լինում են զուգահեռացիդ, ցանցացիդ և վանդակա-վոր:


**Զուգահեռացիդ** են կոչվում այն թևերը, որոնց ջղերն իրար զուգահեռ են և խստ արտահայտված, օրինակ՝ ուղղաթևավորների առաջին և երկրորդ զույգ թևերի ջղավորումը (նկ.10 դ):

**Ցանցացիդ** են այն թևերը, որոնց և՛ երկայնական, և՛ լայնական ջղերը շատ են, նույր և իրար հատելով թևը դարձնում են ցանցաննան: Նման թևեր ունեն մրջնառյուծները, ոսկեաչիկները և մասսամբ ճպուռները (նկ.10 գ):

**Վանդակավոր ջղավորման** դեպքում երկայնական ու լայնական ջղերը քիչ են, թևի մեջ վանդակներ են առաջացնում: Նման ջղավորումն հատուկ է ճանճերին և թաղանթաթևավորներին (նկ.10 ա):

**Զղավորումն առաջնակարգ նշանակություն ունի միջատների կարգաբանության համար.** Զղերը որոշ դեպքում կարող են ծովալել:

Միջատների թևերի տարբեր մասերն ունեն իրենց անվանումը:




Նկ.11. Թևի ջղավորման սխեմա.

C - կոստալ ջիղ, Sc<sub>1</sub>-Sc<sub>2</sub> - սուրկոստալ ջղեր, R<sub>1</sub>-R<sub>5</sub> - ոադիալ ջղեր,

M<sub>1</sub>-M<sub>4</sub> - մեջիալ ջղեր, Cu<sub>1</sub>-Cu<sub>4</sub> - կուրիտալ ջղեր, A<sub>1</sub>-A<sub>5</sub> - անալ ջղեր,

Ju - յուգալ ջղեր



Նկ. 12. Միջատների թևերի տեղամասերի սխեման.


1- թևի հիմք, 2- ետին անկյուն, 3- գագար, 4- առջևի եզր,  
5- արտաքին եզր, 6- ներքին եզր

Միջատների **փորիկը** կազմված է միանման հատվածներից, որոնց թիվը տարբեր տեսակների մոտ տարբեր է: Փորիկի հատվածների առավելագույն թիվը 12 է: Դատվածների նման քանակը բնորոշ է անթև միջատներին (*Apterygota*): Մյուս միջատների հատվածների թիվը բավական կրճատված է, իսկ մի շարք թաղանթաթևակորների և երկթևանիների փորիկը կազմված է միայն 4-5 հատվածներից:

Նույն տեսակի շրջանում փորային թիթեղների՝ ստերնիտների թիվը կարող է տարբեր լինել, օրինակ՝ խավարասերի արուն ունի 9, իսկ եգը՝ 7 ստերնիտ (Նկ. Ծկ. 13, 20):

Ժամանակակից հասուն միջատների փորային հատվածների վերջավորությունները բացակայում են: Դաճախ փորիկի ծայրին տեղադրված են մի շարք հավելվածներ՝ ցերկիներ, գրիֆիլներ, տարբեր տիպի ծվաղիրներ, (մորթեխ, ծղրիդ, ճոիկ, սղոցարար, հեծյալ և մեղվի խայթը, որը ծվաղրի ձևափոխում է):


Միջատների շնչառական անցքերի՝ ստիգմաների առավելագույն թիվը 10 զույգ է և դրանք գտնվում են մարմնի երկու կողքերին: Դրանցից 7-8 զույգը փորի, իսկ մնացած 2-3 զույգը կրծքի հատվածների աջ և ձախ կողմուն են: Փորիկը կրծքի հետ կարող է հոդավորվել 3 ձևով՝ **նստած, ցողունավոր և կախված**.



Նկ.13. Առ խավարասերի փորիկը՝ հատվածավորումը և հավելվածները.  
1-9 փորիկի ստերնիտի հատվածները, 10- գրիֆելներ, 11-ցերկիններ

### ՄԻԶԱՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒ ԲԱԶՄԱՑՈՒՄ


Միջատները հիմնականում բազմանում են ծվեր դմելով: Չվից դուրս եկած թրթուրների ետսաղմնային զարգացման ընթացքը տարբեր է տարբեր տեսակների մոտ: Այսպես՝ կան միջատներ (ուղղաթևավորներ, խավարասերներ, ականջմտուկներ, աղոթարարներ, հավասարաթև կիսակարծրաթևավորներ, տերմիտներ, ողիներ և այլն), որոնց թրթուրներն իրենց կենսակերպով և ընդհանուր տեսքով նման են ծնողական ձևերին, բայց տարբերվում են մարմնի փոքր չափերով, թևերի բացակայությամբ և սեռահասունությամբ: Թրթուրի օրգանիզմի աճի ընթացքում, որը տեղի է ունենում մաշկափոխությամբ, երկարում են բեղիկները, ավելանում է հատվածների թիվը, առաջանում են արտաքին սեռական հավելվածներ և այլն: Զարգացման այս ծեզ կոչվում է **թերի կերպարանափոխություն** (Նկ. 14):



Նկ. 14. Սորեխմերի զարգացումը թերի կերպարանափոխությամբ.  
ա) ձու, բ. գ. դ. ե, զ) 1-5-րդ հասակի թրթուրներ, ը) հասուն նորեխ  
1- առաջնամեջք, 2- միջնամեջք՝ թերի սկզբնակներով, 3- հետնամեջք

Կան միջատներ (թիթեռներ, բգեղներ, թաղանթաթևավորներ, ճանճեր, ցանցաթևավորներ, լվեր, առվակայիններ և այլն), որոնց թրթուրներն իրենց կյանքով և մարմնի տեսքով նման չեն հասուն ծևերին. դրանք որդաննան են, երկարավուն, գուրկ են թևերից, թերանային մասերը հիմնականում կրծող են: Թրթուրային մարմնի փոխակերպումը հասուն կենդանու պահանջում է խորը փոփոխություններ, որի համար զարգացող առանձնյակին անհրաժեշտ է հանգիստ և մեկուսանալու երկար ժամանակ: Այդ միջանկյալ շրջանը կոչվում է **հարսնյակային**.

Հարսնյակային շրջանի համար թրթուրն անշարժանում է, պատվում է խիտինային հաստ թաղանթով, կառուցում է բոժոժ, որի մեջ ավարտվում են միջատի բոլոր վերափոխումները, և դրանց դուրս է գալիս լրիկ կազմավորված ու վերջնական տեսք ստացած միջատը: Զարգացման այդ ծեր կոչվում է **լրիկ կերպարանափոխություն** (նկ. 15):



Նկ.15. Թթենու շերամի զարգացումը լրիվ կերպարանափոխությամբ.  
ա) առու, բ) էգ, ց) թրթուր, դ) բոժոժ, ե) հարսնյակ

Լրիվ կերպարանափոխությամբ զարգացումը համարվում է առավել նորագույն ծև և օգնում է դիմակայի անբարենպաստ պայմաններին:

## ԻՆՉՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԴԱՎԱՁԵԼ ՄԻԶԱՏՆԵՐԻՆ

Միջատներին հավաքելու համար օգտագործում են միջատաբանական ցանցեր, գունավոր լամպեր, գրավչանյութեր, ծուղակներ: Բայց առավել կիրառելի են ցանցերը: Ավելի հարմար է օգտագործել 32 - 33 սմ տրամագծով, մետաղալարե շրջանակով, 90-100սմ երկարությամբ կորով և 65-70 սմ երկարությամբ պարկեր ունեցող ցանցերը: Դավաքած միջատներին քննեցնելու համար օգտագործում են 10սմ երկարությամբ և 5 - 6 սմ տրամագծով անորոշեր, որոնց մեջ լցվում է թունավոր խառնուրդ (մասնագիտական աշխատանքի համար օգտագործում են պատրաստի նյութ՝ արսեն, իսկ ուսանողական պրակտիկաների ժամանակ կիրառվում է եթեր կամ քլորոֆորմ): Անոթի մեջ գցում են 1 սմ լայնությամբ և 50սմ

Երկարությամբ թղթե ժապավեն, որպեսզի միջատները չկպչեն իրար, իսկ եթերով ներծծված բամբակի կտորը տեղափորում են անորի տակ և բերանը փակում խցանով՝ շուր տված դիրքով թողնելով 3 - 4 ժամ: Ֆիքսված միջատներին որոշելուց հետո դասավորում են նախօրոք պատրաստած 17 սմ երկարությամբ, 10սմ լայնությամբ և 3-5 մմ հաստությամբ բամբակի շերտի բարձիկների վրա: Դեռ միջատներին ծածկում են թղթով, և պիտակի վրա գրվում է, թե երբ, որտեղից և ում կողմից է կատարվել հավաքը:

## ՈՐՈՇԻՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Միջատին որոշել՝ նշանակում է գտնել նրա կարգի, ընտանիքի, ցեղի կամ տեսակի ճշգրիտ անվանումը, որով նա հայտնի է գիտական գրականության մեջ:

Միջատի որոշումը կատարվում է որոշիչի միջոցով, որն ընդգրկում է այս կամ այն կերպ խմբավորված, միջատի համար կարգաբանական նշանակություն ունեցող հատկանիշները:

Դատկանիշների յուրաքանչյուր խմբի ոիմաց դրվում են երկու թվեր, որոնցից առաջիններն իրար հաջորդում են հերթականությամբ և կոչվում են **դրույթ (թեզ)**. իսկ երկրորդները գտնվում են փակագծերի մեջ, չունեն որևէ հաջորդականություն, մատնանշում են դրույթի հակադիր հատկանիշների խումբը և կոչվում են **հակադրույթ (անտիթեզ)**:

Որոշումը սկսվում է որոշիչի առաջին կետի ընթերցումով և եթե տվյալ կետում նշված հատկանիշները վերաբերվում են կենդանուն, ապա հաջորդաբար անցում է կատարվում հետագա համարներին, իսկ եթե տվյալ կետի հատկանիշները չեն վերաբերվում կենդանուն, ապա անցում է կատարվում այդ թեզի անտիթեզին:

Այսպիսով՝ խախտելով որոշիչի կետերի հաջորդականությունը՝ կատարվում է մեծ կամ փոքր թոփքներ: Առանց ետ դառնալու պետք է շարունակել որոշումը՝ մինչև հանդիպի հատկանիշների այնպիսի խումբ, որը ոչ միայն համապատասխանում է տվյալ կենդանուն, այլև դրա տակ նշված է կարգաբանական որևէ միավոր՝ կարգ, ընտանիք, ցեղ կամ տեսակ:

Եթե որոշման ընթացքում կարիք է գգացվում առաջ գնալու փոխարեն ետ դառնալ, ապա որոշումն ընթացել է սխալ կարգով և այն պետք է սկսել նորից:

## ԹԵՎԱՎՈՐ ՂԱՍՈՒՆ ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՈՐՈՇԻՉ

1 (2) Թեսեր չունեն, փորիկը վերջանում է 3 պոչաթելերով: Մարմինը տափակ է՝ ծածկված թեփուկներով: Վազում են արագ:

2 (1) Թեսեր ունեն, եթե չունեն, ապա չունեն նաև պոչաթելեր:

3 (6) Գլուխը՝ երկար, հատվածավոր կնճիթով, որը հանգիստ վիճակում ծալվում է փորիկի տակ, մարմնի մակերեսին:

4 (5) Կնճիթը հողավորված է գլխի առջևի մասին: Առջևի թևերը (եթե կան) կազմված են ավելի անուր կաշվեկերպ հիմքից և բաղանթավոր ծայրային մասից (նկ.39):

### 16. Կիսակարժրաքևավորներ՝ *Heteroptera*

5 (4) Կնճիթը, կարծես թե, հողավորվում է գլխի ետին մասում: Առջևի թևերը չեն բաժանվում տարբեր մասերի (նկ.34):

### 15. Դավասարաքև կնճիթավորներ (*ցիկադներ*)՝ *Homoptera*

6 (3) Բերանային մասերն առանց հատվածավոր կնճիթի են, կրծող կամ ծծող, երբեմն թերզարգացած:

7 (1) Բեղերը շատ բարակ են և կարճ, գլխից էլ կարճ: Թեսեր ունեն, որոնք հանգիստ վիճակում չեն ծալվում, այլ մնում են մարմնի կողքերին բաց վիճակում կամ ծալվում են դեպի վեր: Թեսերը հարուստ են ցանցանման շատ ջերով, ունեն ցերկիներ:

8 (9) Ետին թևերը նույն երկարության են, ինչ առջևինները: Փորիկի վերջում կան շատ ցերկիներ: Բերանային մասերը լրիվ զարգացած են (նկ.նկ.16, 18):

### 1. Ծպուռներ՝ *Odonata*

9 (8) Ետին թևերը շատ փոքր են առջևիններից կամ բացակայում են: Փորիկի վերջին հատվածի վրա կան 2-3 հատ երկար, հատվածավոր պոչաթելեր: Բերանային մասերը փափուկ են, չգործող (նկ.19):

## **2. Միորյակներ՝ *Ephemeroptera***

10 (7) Բեղերը լավ գարգացած են կամ կարծ, բայց հաստ: Թևերը հանգիստ վիճակում մեջքի վրա ծալվում են տանիքածև կամ տափակ կերպով (կամ էլ բացակայում են), ջղերը շատ են կամ քիչ:

11 (12) Թաթերը մեկհատվածմի են՝ ծայրը բշտիկով: Թևերը (եթե կան) եզրերում ունեն երկար մազիկեր, գրեթե առանց լայնական ջղերի, ունեն 1-2 երկայնական ջղեր: Շատ մանր միջատներ են (նկ.30):

## **11. Բշտիկառտներ կամ տրիպսներ՝ *Thysanoptera***

12 (11) Թաթերն առանց բշտիկի են, թևերը՝ գրեթե առանց թարթիչների:

13 (14) Առջևի թաթի առաջին հատվածն ուժեղ հաստացած է, որի մեջ տեղավորվում է մանող գեղձը: Թևերը (եթե կան) միակերպ են երկար, նեղ և քաղանթակերպ, ունեն շատ քիչ թվով երկայնական ու լայնական ջղեր: Ապրում են հարավում, քարերի տակ, ոստայնե խողովակներում (նկ.28):

## **9. Եմրիներ՝ *Embiodea***

14 (13) Առջևի թաթի առաջին հատվածը հաստացած չէ:

15 (50) Թևավոր է, ամեն դեպքում մեկ գույց թևերը լավ գարգացած են:

16 (19) Առջևի թևերը փոխակերպված են եղջրային կոշտ վերնաբեկորի և գոկված են ջղերից (երբեմն դրանք բացակայում են, երբեմն էլ կարծ են): Ետին թևերը մեծ են, քաղանթակերպ, հանգիստ վիճակում ծալվում և պահպում են վերնաբեկորի տակ (երբեմն մասամբ դրւում են մնում վերնաբեկորի տակից) կամ բացակայում են: Բերանային մասերը կրծող են:

17 (18) Փորիկի ծայրին ունեն եղջրային, աքցանանման մեջ ցերկիներ: Փորիկը կազմված է 10 հատվածից (նկ.29):

## **10. Մաշկաթևավորներև կամ ականջմտուկներ՝ *Dermoptera***

18 (17) Փորիկի ծայրին աքցաններ չկան: Փորիկն արտաքինից ունի մինչև 8 հատված (նկ.40):

## **17. Կարծրաթևավորներ կամ բզեզներ՝ *Coleoptera***

19 (16) Առջևի թևերը ջղերի ցանցով են:

20 (27) Առջևի թևերը կաշվեկերպ են, ավելի ամուր, քան ետին թևերը, որոնք քաղանթակերպ են, լայն և ծալվում են հովհարածև:

Երկու զույգ թևերն եւ ջղերի խիտ ցանցով են: Ցերկիները հատվածավոր են, բայց սովորաբար կարճ: Էզը սովորաբար ունի ծվաղիր:

21 (26) Ետին ազդրերը հաստացած չեն: Երկար ծվաղիր չունեն:

22 (25) Գլուխը սրտածն է՝ ուղղված ներքև -ետ:

23 (24) Մարմինը հարթ է, տափակ, գլուխը թեքված է լայն առաջնակուրծքի տակ: Ոտքերը նորմալ են (նկ.20):

### 3. Խավարասերներ՝ *Bleptoptera*

24 (23) Մարմինը երկարությամբ ծգված է, առաջնակուրծքն ավելի երկար է, քան իր լայնությունը: Գլուխը խիստ դյուրաշարժ է: Առօկի ոտքերը գիշատիչ են, սրունքները և ազդրերը գինված են սուր փշերով (նկ.21):

### 4. Աղորարարներ՝ *Mantodea*

25 (22) Գլուխը կլորավուն է՝ ուղիղ կամ թեք ուղղված դեպի առաջ: Մարմինն ուժեղ ծգված է երկարությամբ (նման է ճյուղի) կամ տափակ է (նման է տերկի) (նկ.26):

### 7. Չողիկանմաններ կամ ուրվականներ՝ *Phasmodea*

26 (21) Ետին ազդրերը հաստ և լայն են (ոտքերը ցատկող են): Առաջնակուրծքը կլորավուն է կամ կողքերից սեղմված: Գլուխն ուղղված է ներքև (էզերի երթեմն ծվաղիր ունեն) (նկ.նկ. 23-25):

### 6. Թատկող ուղղաթևակորներ՝ *Orthoptera*

27 (20) Առօկի թևերը քաղանթակերպ են:

28 (31) Ետին թևեր չունեն: Բերանային մասերը ծակող-ծծող են, երթեմն թերզարգացած:

29 (30) Թաթերը մեկհատվածանի են, մեկ ճանկով: Բերանային մասերը թերզարգացած են (նկ.նկ.35-38):

### 15. Դավասարաք կնճիթավորներ կամ ցիկադներ (կոկցիդների արում)՝ *Hemiptera*

30 (29) Թաթերը կազմված են 2-5 հատվածներից: ճանկերը 2 հատ են՝ գրեթե միշտ լավ զարգացած կնճիթով (նկ.նկ.53-54):

### 24. Երկրևանիներ կամ ճանճեր՝ *Diptera*

31/28/ Ետին թևեր ունեն:

32 (35) Թևերը ծածկված են թեփուկներով կամ շատ թե քիչ կարծ մագիկներով: Գրեթե երթեք ծամիչներ չեն ունենում, ներքին շրթունքն ապածած է: Ունեն շոշափուկներ:

33 (34) Թեսերն ու մարմինը պատված են թեփուկներով: Ծնութերը ծևավորում են երկար, զսպանակածն փաթթաբված կնճիթ (կնճիթը երբեմն կարծ է կամ բացակայում է): Ծամիչները բացակայում են (կան միայն մի քանի ընտանիքների ներկայացուցիչների մոտ): Ծնութային շոշափուկները հաճախ թերզարգացած են (նկ.58):

### **26. Թեփուկաթևավորներ կամ թիթեռներ՝ *Lepidoptera***

34 (33) Թեսերն ու մարմինը ծածկված են մազիկներով, որոնք երբեմն լինում են նոսր: Ծնութները կնճիթ չեն առաջացնում: Միշտ ունեն ծնութային շոշափուկներ, որոնք կազմված են 3-5 հատվածներից: Ծամիչներ չունեն (նկ.55):

### **25. Սազաթևավորներ կամ առվակայիններ՝ *Trichoptera***

35 (32) Թեսերի թաղանթը մերկ է, հաճախ փայլուն (կամ մանրագույն մազիկներով, ջղերի վրա լինում են մազիկներ):

36 (37) Ծամիչներն ու ծնութները փափուկ են, թերզարգացած: Գլուխն ուղղված է առաջ, առջևի և ետին թևերը թաղանթակերպ են, հանգիստ վիճակում հարթ, տափակ կերպով ծալվում են մեջքի վրա: Ետին թևերը անոյուգալ շրջանում ետևից լայնացած են: Ունեն շատ ջղեր, առաջացնում են ծվածե ցցվածք: Թերկինները հաճախ երկար են, հատվածավոր (նկ.27):

### **8. Գարնանայիններ՝ *Plecoptera***

37 (36) Ծամիչները լրիկ զարգացած են: Թեսերը ծալվում են տափակ կամ տանիքածն: Թեսերի անոյուգալ մասը լայնացած չէ, ունեն 3-4 ջիղ:

38 (47) Թեսերը մեծ են, սովորաբար ցանցավոր, շատ ջղերով: Ետին թևերը հիմքում լայնացած չեն և սովորաբար նման են առջևի թևերին: Առաջնակուրժք լավ սահմանազատված է:

39 (40) Առջևի և ետին թևերը միանման են՝ ճյուղավորված երկայնական ջղերով: Դրանց միջև կան անկանոն ցանցի որոշ մնացորդներ (նկ.22):

### **5. Տերմիտներ՝ *Isoptera***

40 (39) Լայնական ջղերը նույն հաստության են, ինչ երկայնական ջղերը: Դրանք սովորաբար շատ են, հաճախ ետին թևերն այլ ձևի են՝ առաջնների համեմատ:

41 (42) Գլուխը կտուցածն ծգված է դեպի ցած, որի ծայրին տեղավորված են կրծող բերանային մասերը: Թևերը ծգված են երկարությամբ, որոնք հանգիստ վիճակում ծալվում են մեջքին՝ շատ թե քիչ տափակ ձևով (նկ.52):

### **23. Կարիծանմաններ կամ կարիծանմեր՝ Mesoptera**

42 (41) Գլուխը նորմալ է, թևերը մեծ են, ցանցավոր, հանգիստ վիճակում ծալվում են տանիքածներ:

43 (44) Բեղերը տեղավորված են աչքերի միջին տարածությունում: Թաթերը հինգհատվածանի են: Դատվածներից ոչ մեկը լայնացածած չէ (նկ.նկ.47-49):

### **21. Ցանցաթևավորներ՝ Neuroptera**

44 (43) Բեղերը տեղավորված են աչքերից առաջ: Թաթերը կազմված են 4-5 հատվածներից: Երրորդ կամ չորրորդ հատվածը լայն է:

45 (46) Թաթերի չորրորդ հատվածը երկրթակածն լայնացած է: Թևերը թխավուն են՝ առանց պտերոստիգմայի, պարզ աչքեր և ծվաղիր չունեն (նկ.45):

### **19. Մեծաթևավորներ կամ կախթևանիներ՝ Megaloptera**

46 (45) Թաթերի երրորդ հատվածը լայն է, թևերը թափանցիկ են, փայլուն, ունեն պտերոստիգմա: Էգն ունի ծվաղիր (նկ.46):

### **20. Ուղտիկներ՝ Raphidioptera**

47 (38) Թևերը մեծ չեն, ցանցավոր չեն, ունեն ոչ շատ լայնական ջղեր: Ետին թևերը կարծ են առջևիններից:

48 (49) Առաջնակուրծքը լավ սահմանազատված է: Գլուխը մեծ է՝ ուռուցիկ աչքերով, թևերը՝ ճկված ջղերով, որոնք հանգիստ վիճակում ծալվում են տանիքածներ:

Սարմնի ծածկույթը փափուկ է, փորը՝ նստած ձևի (նկ.31):

### **12. Խոտիարներ՝ Coleoptera**

49 (48) Առաջնակուրծքը միացած է կրծքի մնացած մասերի՝ որպես մեկ ամբողջություն: Առաջնակուրծքը սահմանազատված չէ: Աչքերն ուռուցիկ չեն, առջևի թևերը նեղ են, ջղերը ճգված չեն: Ետին թևերը լայն են կամ նեղ, հաճախ պարզ կառուցվածքի ջղերով: Փորիկը կրծքի հետ միացած է (ոչ բոլորի մոտ) ցողունակերպ (նկ.նկ.50, 51):

## **22. Թաղամբարևավորներ՝ Հյուտօռորտեր**

50 (15) Թևեր չունեն կամ դրանք շատ կարծ են, թերզարգացած:

51 (52) Գլուխը կտուցածն ծգված է դեպի ցած, որի ժայրին տեղավորված են կրծող բերանային մասերը (նկ.52):

## **23. Կարիճանմաններ կամ կարիճանմաններ՝ Մեօրտեր**

52 (51) Գլուխը կնճիթանման ծգված չէ:

53 (54) Փորիկի ժայրին կամ մեծ աքցաններ (նկ.29):

## **10. Սաշկաթևավորներ կամ ականջմտուկներ՝ Դեմարտեր**

54 (53) Աքցաններ չունեն:

55 (56) Սարմինը կողքերից խիստ տափակած է, ետին ոտքերը ցատկող են, տաքարյուն կենդանիների մակաբույժներ են (նկ.44):

## **18. Լվեր՝ Արհանիրտեր**

56 (55) Սարմինը կողքերից տափակացած չէ:

57 (66) Սարմինը տափակացած է վերևից ներքև:

58 (61) Առաջնակուրծքը մեծ է գլխից, գլուխը թեքված է ցած՝ առաջնակործի տակ:

59 (60) Ցերկիններ ունի: Գլուխը սրտածն է (նկ.20):

## **3. Խավարասերներ՝ Բլետորտեր**

60 (59) Ցերկիններ չունի: Գլուխը կլորվուն է:

## **17. Կարծրաթևավորներ կամ բզեզեններ՝ Կոլեորտեր**

61 (58) Առաջնակուրծքը մեծ չէ, փոքր է գլխից: Ուտքերն ուղղված են դեպի կողքերը և վերջանում են ուժեղ ճանկերով: Գլուխը ցցված է առաջ, աչքերը փոքր են՝ քիչ ֆասետներով: Մակաբույժներ են:

62 (63) Բերանային մասերը կրծող են: Տաքարյուն կենդանիների մակաբույժներ են (նկ.32):

## **13. Փետրակերներ՝ Մելլորհեգա**

63 (62) Բերանային մասերը խայթող-ծծող կնճիթով են:

64 (65) Բեղերը գլխի երկարության են՝ կազմված 3-6 հատվածներից: Թաթերը մեկ մեծ ճանկով են: Շոշափուկներ չունեն: Տաքարյուն կենդանիների մակաբույժներ են (նկ.33):

## **14. Ողիլներ՝ Անորլուրա**

65 (64) Բեղերը գլխից բավականին կարծ են՝ կազմված 2-3 հատվածներից: Թաթերը 2 ճանկերով են: Շոշափուկներ ունեն: Տաքարյուն կենդանիների և միջատների մակաբույժներ են:

## **24. Երկրևանիներ կամ ճանճեր (արյուն ծծողների ընտանիք)՝ *Diptera***

66 (57) Մարմինը տափակած չէ: Գլուխն ուղիղ կամ թեք ուղղված է ներքև:

67 (78) Բերանային մասերը կրծող տիպի են (ունեն ծամիչներ):

68 (69) Առաջնակուրծքը միացած է կրծքային մնացած հատվածներին՝ կազմելով մեկ ամբողջություն: Փորիկը ցողունիկով է, մարմնի ծածկույթն՝ ամուր:

### **22. Թաղաճրաքավորներ՝ *Hymenoptera***

69 (68) Առաջնակուրծքն ազատ է:

70 (71) Ետին ազդրերը հաստացած են (ոտքերը ցատկող են): Առաջնակուրծքի եզրերը կորացած են ներքև:

### **6. Ցատկող ուղղաքավորներ՝ *Saltatoria***

71 (70) Ետին ազդրերը հաստացած չեն:

72 (75) Մարմինը երկարությամբ շատ ծգված է, խոշոր ծևեր են:

73 (74) Առջևի ոտքերը գիշատիչ են, իրենց վրա կրում են փշեր:

### **4. Աղորարարներ՝ *Mantoptera***

74 (73) Առջևի ոտքերը սովորական տիպի են:

### **7. Զողիկաննաններ կամ ուրվականներ՝ *Plasmodesa***

75 (72) Մարմինը երկար չէ:

### **12. Խոտիարներ՝ *Copeognatha***

76 (77) Աչքերը ոչ մեծ են, ոչ էլ ուռուցիկ: Ունեն կարճ ցերկիներ: Բեղերը մարմնից կարճ են: «Դասարակական» կյանք վարող, փոքր ու միջին մեծության, տարբեր կազմությամբ միջատներ են:

### **5. Տերմիտներ՝ *Isoptera***

77 (76) Աչքերն ուռուցիկ են, ցերկիներ չունեն, բեղերը մարմնի երկարության են: «Դասարակական» կյանք չեն վարում, մանր միջատներ են՝ փափուկ և նուրբ ծածկույթով:

### **12. Խոտիարներ՝ *Copeognatha***

78 (67) Բերանային մասերը ծծող են կամ թերզարգացած (լավ զարգացած ծամիչներ չունեն):

79 (80) Մարմինը պատված է խիտ, փափուկ, հեշտ թափվող թեփուկներով կամ մազիկներով: Կնճիթը ոլորված է զսպանակածն կամ բացակայում է:

### **26. Թեփուկաքավորներ կամ թիթեռներ՝ *Lepidoptera***

80 (79) Մազիկները կոշտ են, նոսր, կնճիթն ուղիղ է:


### **24. Երկրևանիներ կամ ճանճեր՝ *Diptera***

## ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

### Կարգ 1. Ծպութներ (Odonata)

Խոշոր կամ միջին չափի միջատներ են, ունեն մեծ գլուխ, որը շարժուն կերպով միացած է երկար և նեղ փորիկի հետ: Գլխի մեջ մասը զբաղեցնում են 2 շատ մեծ ֆասետային և 3 փոքր պարզ աչքերը: Բեղիկները խոզանակերպ են, շատ կարճ՝ կազմված 3-7 հատվածներից: Բերանային ապարատը կրծող տիպի է (նկ. 16):


Առաջնակուրծքը փոքր է, կրծքի միջին և հետին հատվածները լավ զարգացած են: Ոտքերը երկար են, բայց քույլ զարգացած: Թևերը 2 զույգ են, գրեթե նույն չափերի, ցանցաձև, հանգիստ վիճակում չեն ծալվում մեջքի վրա և մնում են բացված:



Նկ.16. Ծպութ.  
1- բեղիք, 2- բարդ աչքեր,  
3- սրբանային ստորին  
հավելվածներ,  
4- սրբանային վերին հավելվածներ,  
5- պտերոստիզմա:


Փորիկը կազմված է 10 հատվածներից, և դրա ծայրին արուներն ունեն մեկական զույգ վերին և ստորին, իսկ էգերը՝ միայն մեկ զույգ վերին սրբանային հավելվածներ: Արուների զուգավորման ապարատը գտնվում է փորիկի երկրորդ հատվածի ստորին մակերեսի վրա: Էգերի մոտ սեռական անցքը բացվում է փորիկի 8-րդ և 9-րդ հատվածների սահմանում և քողարկված է ծվաղիրով:

ճպուռները գիշատիչներ են, սնվում են թոխքի ժամանակ, վարում են ցերեկային կենսակերպ: Օգտակար են, ոչնչացնում են վնասատու և արյունածու միջատներին: Եգերը ծվաղրում են ջրի, խոնավ հողի, ջրային բույսերի վրա: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Թրթուրները նույնպես գիշատիչ են, ապրում են ջրային միջավայրում, շնչում են խոհիկներով, որոնք տերևանման հավելվածների տեսքով տեղադրված են ուղիղ աղիում՝ փորիկի ծայրին: Թրթուրների ստորին շուրջը (դիմակը) վերածվել է բռնող օրգանի, որը որսի ժամանակ առաջ է նետվում և հափշտակում գորիին, իսկ հանգիստ վիճակում ծալվում է դեմքի վրա (Ըկ. 17):



Ըկ.17 ճպուռի թրթուրի ներքին շրթունքը (դիմակը)  
1- փակ, 2- կիսաբաց վիճակում

ճպուռների կարգը բաժանվում է 2 ենթակարգերի՝ հավասարաքան ճպուռներ (*Zygoptera* նկ.18ա), անհավասարաքան ճպուռներ (*Anisoptera* նկ.18բ). Դաշտավայրաքան ճպուռների 2 զույգ թևերը միանման են, բարդ աչքերի միջև եղած տարածությունը գերազանցում է աչքի լայնությունը: Անհավասարաքան ճպուռների 2 զույգ թևերը միանման չեն՝ ետին թևերը հիմքային մասում զգալի լայն են առջևի թևերից: Խոշոր աչքերը գլխի գագաթային մասում իրար են շփվում, եթե դրանց միջև եղած տարածությունը փոքր է:



Նկ.18. ճպուռներ.

ա) հավասարաք, բ) անհավասարաք

## Կարգ 2. Միօրյակներ (*Ephemeroptera*)


Միջին չափերի (մինչև 35 մմ), թույլ խիտինացված ծածկույթներով միջատներ են: Դասուն ժամանակ չեն սնվում: Բերանային օրգաններն ապաճել են: Թևերը ցանցաձև են, ետին զույգը կարծ է առջևիններից, երբեմն բացակայում է: Փորիկը կազմված է 10 հատվածներից և ժայրում կրում է 2 կամ 3 պոչաթելեր:

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Թրթուրները 1-3 տարի ապրում են քաղցրահամ ջրամբարներում, որի ընթացքում մինչև 25 անգամ մաշկափոխություն են կատարում և հետո

Վերածվում թևավոր, ոչ սեռահասուն ծեփ (*սուրիմագոյ*): Վերջինս մեկ անգամ ևս մաշկափոխություն կատարելուց հետո դառնում է **իմագո**: Եզր ծվաղրում է ջրում: Թրթուրներն ունեն կրծող բերա-նային ապարատ, շնչում են տրախեային խորիներով: Ետին գույզ ոտքերը հաճախ լողացող տիպի են: Սնվում են բույսերի մնացորդ-ներով և մանր ջրիմուներով, երբեմն ինֆուզորներով, որոշ միջատների թրթուրներով:

Միօրյակներն օգտակար միջատներ են, որոնց թրթուրները սնունդ են ծառայում արդյունաբերական ձկների և դրանց մատղաշների համար:

Ներկայացուցիչն է **սովորական միօրյակը** (*Ephemera vulgata*), (նկ.19):



Նկ.19 Միօրյակներ


### Կարգ 3. Խավարասերներ (*Blattoptera*)

Միջին չափերի կամ խոշոր, տափակ մարմնով միջատներ են: Գլուխը եռանկյունաձև կամ սրտաձև է՝ վերևից գրեթե ամբողջովին ծածկված առաջնակրծքով: Աչքերը բողբոջանման են, աչիկները 2-ն են և տեղադրված բարդ աչքերի ներքին եզրում:

Բեղիկները երկար են, խոզանաձև: Բերանային ապարատը կրծող տիպի է:

Ոտքերը վազող են, ազդրերը՝ տափակած, հիմք հատվածանի: Ունեն 2 զույգ թևեր, որոնցից մի զույգը կաշվենման վերնաթեր են, մյուսը՝ թաղանթանման: Թևերը կարող են լինել կարճացած կամ լրիվ ապածած:

Փորիկը տափակ է՝ կազմված 8-10 հատվածներից: Վերջին հատվածի վրա տեղադրված են հատվածավոր ցերկիները, իսկ արուների մոտ առկա են նաև ոչ հատվածավոր գրիֆիլներ (նկ.20):



Նկ. 20. Աև խավարասեր.

ա) արուն մեջքի կողմից, բ) էգը մեջքի կողմից


- 1- անտենաներ, 2- ստորին ծնոտի շոշափուկներ, 3- առաջնակուրծք,
- 4- վերնաթեր, 5- միջնակուրծք, 6- հետնակուրծք, 7- փորիկ, 8- ցերկիներ,
- 9- գրիֆիլներ

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Էգերը ծվաղում են կաշվենման պատիճի՝ օօտեկայի մեջ: Որոշ խավարասերներ կենդանածին են: Կենսացիկլը տևում է 2-3 ամսից մինչև 3-4 տարի: Բնակվում են տերևների վրա, քարերի տակ, բնակարաններում: Վարում են գիշերային կենսակերպ, ամենակեր են:

Տարածված տեսակներից են սև խավարասերը (*Blatta orientalis*), շեկ խավարասերը՝ պրուսակը (*Blatta germanica*) և ամերիկական խավարասերը (*Periplaneta americana*):

#### Կարգ 4. Աղոթարարներ (*Mantoptera*)

Խոշոր միջատներ են, երկարավուն մարմնով, ազատ, շարժուն, եռանկյունաձև գլխով (նկ. 21):



Նկ.21. Աղոթարար

Բարդ և երեք պարզ աչքերը լավ զարգացած են, թեղերը բազմահատված են, թելաձև, երբեմն սանրածն կամ թույլ արտահայտված խոզանածններ: Բերանային ապարատը կրծող տիպի է: Առաջնակուրծքը երկար է: Առաջին զույգ ոտքերը բռնող են՝ զինված սուր փշերով, միջին և ետին զույգը վազող է: Բոլոր ոտքերի թաթերը հիճնգիտվածների են: Երկու զույգ թևերը տարբեր են, ցանցածներ: Վերնաթևերը կիսաթափանցիկ են, երբեմն կարճացած: Ետին թևերն ավելի լայն են և հանգիստ վիճակում փորի վրա ժալվում են գրեթե տափակ դիրքով:


Փորիկը երկար է, տափակ, կազմված 10 տերգիտներից: Ստերնիտներն արուների մոտ ինն են, եգերի մոտ՝ յոթը: Եգերի փորիկի վերջին հատվածի վրա գտնվում են բազմահատված, երկար ցերկիներ, իսկ արուների մոտ՝ զույգ գրիֆիններ, որոնք հատվածավոր չեն:

Բոլոր աղոթարարները ցերեկային կենսակերպ վարող գիշատիչներ են: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ:

Եգերը մեծ թվով ծվեր են դնում խոշոր ծվակովոնի (օօտեկա) մեջ, որն ամրացնում են թիերին, ծառերին: Թրթուրները մաշկափոխություն են կատարում 5-10 անգամ: Չվից դուրս են գալիս ուշ գարնանը, սնվում են միջատներով: Նույն ամռանը թրթուրները դառնում են սեռահասուն: Տարեկան տալիս են 1 սերունդ:

#### Կարգ 5. Տերմիտներ (Isoptera)

Միջին չափերի միջատներ են: Սեռական առանձնյակների երկարությունը 1.5սմ, աշխատավորներինը՝ 0.5-0.8 սմ, զինվորներինը՝ մինչև 1.5սմ (նկ.22):



Նկ.22. Տերմիտների գաղութների կաստաները.

- 1-6 տերմիտի կաստաները, 1- էգ բազուկի, 2- արու (թագավոր),  
3- խոշոր զինվոր, 4- փոքր զինվոր, 5- խոշոր բանվոր,  
6- փոքր բանվոր, 7- քաղաքացի զինվոր

Թևավոր առանձնյակներն ունեն 2 զույգ ցանցանման թևեր, որոնք իրար նման են: Թևերը մեջքի վրա ծալված վիճակում փորիկից երկար են: Թևավոր առանձնյակների կրծքի և փորիկի հատվածները խիստ կարծրացած են: Ուղերը չորսհատվածանի են: Ետին ծննդները խոշոր են, լավ զարգացած, ուղղված առաջ: Աշխատավոր առանձնյակների գլուխը կլոր է, կրծքային բաժինը

թույլ զարգացած: Փորիկի ծայրին գտնվում են 2-5 հատվածանի ցերկիներ: Աչքերը թերզարգացած են, հաճախ նույնիսկ բացակայում են: Բուսակեր են, սնվում են բնափայտով: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ:

#### → Կարգ 6. Յատկող ուղղաքևեր (*Orthoptera*)

Սարմինը երկար է, կողդերից քիչ սեղմված, գլուխն ուղղված է դեպի ցած, առանձին տեսակների մոտ ծգված է դեպի առաջ: Բարդ աչքերը լավ զարգացած են; ունեն նաև 1-3 պարզ աչքեր: Բեղիկները բազմահատված են՝ տարբեր տիպի և երկարության: Առանձին տեսակների մոտ թեղերը մարմնից երկար են: Նման թեղեր ունենում են 200 և ավելի հատվածներ: Դրանք մեծ մասի մոտ թելավանան են կամ խոզանածն, հազվադեպ՝ համրիչաննան, գնդասեղաննան կամ թրածն:

Բերանային ապարատը կրծող տիպի է: Առաջնակուրժքը լավ զարգացած է: Թևերը 2 զույգ են: Վերնաթևերը նեղ են, կաշվենման: Ներքին թևերը նուրբ են, թաղանթածն, ավելի լայն և հովհարածն ծալվում են վերնաթևերի տակ: Թևերը երբեմն կարճացած են կամ բացակայում են: Ետին զույգ ոտքերը ցատկող են, առաջին և երկրորդ զույգը՝ վագող: Երբեմն առջևի ոտքերը փորող են: Ոտքերի թաթերը կազմված են տարբեր հատվածներից (1-4): Վերջին հատվածն իր վրա կրում է երկու ճանկեր:

Փորիկը կազմված է տաս տերգիտներից: Փորիկի ծայրին ամրացած են միահատվածանի, հազվադեպ բազմահատվածանի ցերկիները, առանձին տեսակների մոտ կան նաև գրիֆիլներ: Էգն ունենում է տարբեր ձևի և չափի ծվադիր: Երբեմն ծվադիրը բացակայում է: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Շատ թեղուն են, հիմնականում ծվադրում են հողում: Զվերը դրվում են մեկական կամ կույտերով: Մորթիների ծվերը ծածկված են ծվապարկով:

Ուղղաքևավորների մեծ մասը բուսակեր է և վնաս է հասցնում գյուղատնտեսական մշակովի բույսերին:

Կարգը բաժանվում է երկու ենթակարգերի՝ *Երկարարեղ* (*Dolichocera*) և *Կարճարեղ* (*Brachycera*) *ուղղաքևավորներ*. Երկարարեղավորներին բնորոշ են խոզանակերպ թեղիկները, որոնց երկա-


րությունը հաճախ գերազանցում է մարմնի երկարությունը, եգերն ունեն երկար ծվաղիր և լսողական օրգան (տիմպանալ օրգան), որը գտնվում է առջևի ոտքերի սրունքների վրա (նկ.23.2):

Երկարաբեղ ուղղաթևավորների ենթակարգը բաժանվում է 2 վերնաընտանիքների՝ **ծղրիդների** (*Tettigoniodea*) և **ծախկների** (*Grylloideae*) (նկ.նկ.23-24):

Կարճաբեղ ուղղաթևավորներին բնորոշ են համեմատաբար կարծ (մարմնի կեսից էլ կարծ), թելանման, երեսն համրիչաննան կամ գնդասեղանման բեղիկները, կարծ ծվաղիրը և լսողական օրգանը, որը տեղադրված է փորիկի առաջին հատվածի կողքերին: Այս ենթակարգին են պատկանում **մորեխների** (*Acridoidea*) և **տրիպերսուայինների** (*Tridactyloidea*) ընտանիքները (նկ.25):

### **Ընտանիք՝ ծղրիդներ (*Tettigoniodea*) †**

Բեղերը խոզանակերպ են, բազմահատված, մարմնից երկար: Սովորաբար ծղրիդների 2 զույգ թևերը լավ զարգացած են, միայն առանձին տեսակների մոտ հազվադեպ բացակայում են կամ կարծ են: Արուների վերնաթևները հիմքի մասում ունեն լայնացած թաղանթանման, թափանցիկ տարածություն, որը ծայնային ապարատի դեր է կատարում, երբ վերնաթևները քսվում են իրար: Չախ վերնաթևները ծածկված են աջ վերնաթևներով (նկ. 23):



Նկ. 23. Էգ ծղրիդ.

1- առջևի սրունքը կողքից, 2- տիմպանալ օրգանի բացվածքը, 3- ծվաղիր


Ոտքերը պատված են փշերով, տիմպանալ օրգանի արտաքին բացվածքը սրունքի վրա ծվածն կամ աղեղածն ճեղքի տեսք ունի: Թաթերը չորսհատվածանի են: Փորի ստեռնիտներն եգերի մոտ 8,

արուների մոտ 9 հատ են, իսկ վերջին ստեղնիտը իր վրա կրում է երկու գրիֆիլ: Ցերկիները մեկհատվածանի են, ձվադիրը լավ զարգացած է, կողքերից սեղմված, թրածև կամ աղեղնածն՝ կոր, առանձին տեսակներ արտաքին ձվադիր չունեն:

Ծղրիդների մեծ մասը բուսակեր է, մի մասը՝ գիշակեր: Չվադրում են հողում և բույսերի վրա:

### *Ընտանիք՝ ճռիկներ (Grylloidea) †*

Սարմինը տափակ է, սովորաբար պատված տարբեր աստիճանի զարգացած խոզաններով: Մեծ մասի մոտ գլուխը կլորավուն է և բերանի հետ ուղղված է դեպի ցած, խլուրդաճոհիկների մոտ՝ դեպի առաջ: Վերնաթևները մարմնի վրա այնպես են տեղադրված, որ ծախը ծածկում է աջը (նկ. 24):



Նկ.24. ճռիկներ.  
1- դաշտային ճռիկ 2- խլուրդաճոհիկ

Բարդ աչքերը համեմատաբար փոքր են, ձվածկ, երբեմն թերզարգացած: Ճռիկներն ունեն նաև 3 պարզ աչքեր, որոնք գրեթե նկատելի չեն: Դրանցից միջինը տեղադրված է բեղերի միջև, իսկ կողքայինները՝ բեղերի հիմքում: Խլուրդաճոհիկն ունի պարզ, ուռուցիկ աչքեր:

ճոհկների բեղերը խոզանակերպ են, մարմնից երկար և միայն խլուրդաճիկների մոտ դրանք կարծ են, հաստ և մարմնի կեսին չեն հասնում: ճոհկների արուները, ծղրիդների նման, վերնաթևների վրա ունեն ավելի բարդ կառուցվածքի ծայնարձակ օրգան: Խլուրդաճիկների տիմպանալ օրգանը տեղավորված է սրունջի ներքին մակերեսին: Դրա արտաքին բացվածքը երկայնական ճեղքի տեսք ունի:

Ճոհկների բոլոր թաթերը երեքհատվածանի են: Չվաղիրը երկար է, բարակ և ծայրին նետածն լայնացում ունի: Խլուրդաճիկներն արտաքին ծվաղիր չունեն:


Ճոհկների մեծ մասը ծվաղիրում է հողում, առանձին տեսակներ՝ բույսերի ցողուններում: Չմեռում են ծվի կամ թրթուրի փուլում: Ճոհկները մեծ մասամբ ապրում են գետնի մակերեսին, ավելի ակտիվ են գիշերը: Ցերեկը թաքնվում են հողակոչտերի, քարերի տակ, հողի ճեղքերում, առանձին տեսակներ՝ մարդու բնակարանում, օրինակ տնային ճոհկը: Խլուրդաճիկները համարվում են վնասատուներ:

### *Ընտանիք՝ Սորեխներ (Aridodea) +*

Ուղարկավորների ամենամեծ ընտանիքն է: Գլուխը ծվածեռանկյունածն է կամ կոնածն՝ ծգված դեպի առաջ և բերանային մասերի հետ ուղղված է ներքև (նկ. 25):

Բարդ աչքերը երկարավուն են, պարզ աչքերը 3 հատ են, որոնցից մեկը ճակատի կենտրոնում է, իսկ երկուսը՝ բարդ աչքերից առաջ: Բեղերը կարծ են և բազմազան՝ թելածն, գնդասեղանման, թրածն, երբեմն համրիչանման և բաղկացած են մինչև 25 հատվածներից:

Առաջնակուրծքն ունի լավ զարգացած կողային թիակներ, տարրեր աստիճանի զարգացած երեք երկայնական ողնուցներ և 1-3 լայնական ակրոներ: Միջնակուրծքը և հետնակուրծքը սեր-տաճած են և ներքեց առաջացնում են կրծքային թիթեղ: Երկու զույգ թևերը տարրեր աստիճանի զարգացած են, երբեմն կարծ են կամ բացակայում են:



Նկ.25. Մորթխների տարբեր տեսակներ

Փորիկի առաջին հատվածի երկու կողքերին տեղադրված է անցքի տեսք ունեցող տիմպանալ օրգանը՝ պատված թաղանթով։ Թևերը չունեցող տեսակների լսողական օրգանը կարող է բացակայել։ Փորիկի վերջում կան մեկ զույգ կարճ ցերկիներ։

Առջևի ոտքերը քայլող են՝ երեք հատվածանի թաթերով։ Ետին ոտքերը ցատկող են։ Մորթխները ծայն արծակելիս ետին ազդրերը շփում են առջևի թևերին։ Զվադիրը թաղկացած է չորս կարճ, կեռ կամ սղոցածև փեղկերից։

Մորթխները ծմեռում են ձվի փուլում, բացի եգիպտական և մի քանի այլ տեսակներից, որոնք ծմեռում են հասուն փուլում։ Զվադրում են հողի մեջ, տերևածոցերում, ցողուններում։ Զվերը պատված են ձվապարկերով։

Բոլոր մորթխները բուսակեր են։ Տեսակներից մի քանիսը մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը։

Ըստ վարքի առանձնահատկությունների՝ տարբերում են *ոչ երամայիններ* կամ *ծիուկներ* և *երամայիններ* կամ *մորթխներ*։

Երամային տեսակները ներկայացված են ծևաբանորեն տարբեր երկու փուլերով՝ երամային և մենակաց: Երամային փուլի միջատներն ունակ են գաղթելով անցնել մեծ տարածություններ:

#### Կարգ 7. Զողիկանմաններ կամ ուրվականներ (*Phasmodea*)

Խոչոր միջատներ են: Արևադարձային առանձին տեսակների երկարությունը ծգված ոտքերով հասնում է 30-35 սմ-ի: Գլուխը գնդածն է, ունեն կլորավուն աչքեր: Բեղերը թելանման կամ խոզանակերպ են: Բերանային ապարատը կրծող է: Առաջնակուրծքը փոքր է, քառակուսանման: Միջնակուրծքը և հետնակուրծքը խիստ երկարացած են: Փորիկի տասներորդ հատվածը երկար է կամ լայնացած, տերևանման: Այդ առանձնահատկությունների շնորհիվ ուրվականները ծառի ճյուղի կամ թևերի տեսք են ստանում (նկ. 26):



Նկ. 26. Ուրվական

Ոտքերը երկար են, բարակ, հիմգիատվածանի թաթերով և ծծիչով, որը տեղավորված է ճանկերի միջև:


Վերնաթևերը կարճացած են կամ բացակայում են: Երբեմն թևերը լավ զարգացած են և ծալվում են հովիարածն: Փորիկի վերջում գտնվում է մեկիատվածանի ցերկի: Եգերը սովորաբար խոչոր են արուներից: Զվադիրը կարծ է, տեղադրված է փորիկի ստորին մասում:

Բուսակեր են, զարգանում են թերի կերպարանափոխությամբ:

#### Կարգ 8. Գարնանայիններ (*Plecoptera*)

Երկար, տափակած մարմնով միջատներ են, գլուխը մեծ է՝ ուղղված դեպի առաջ: Բերանային մասերը՝ ծամիչները և ծնոտները, փափուկ են, թերզարգացած, հաճախ չեն գործում: Բեղերը երկար են, բազմահատված, թելանման:

Թևերը ցանցանման են, հանգիստ վիճակում հարթ-տափակ ծալվում են մեջքի վրա: Ետին թևերը ծալվում են հովհարածն: Երբեմն թևերի զարգացման ընթացքում նկատվում է **սեռական երկծնություն**. Արուների թևերը կարծ են, եգերն ունեն նորմալ զարգացած թևեր: Կան տեսակներ, որոնք թևեր չունեն: Ուժեղը քայլող են, երեքհատվածանի, թաթերով: Տասը հատվածանի փորիկի վերջում կան թելանման, բազմահատված ցերկիներ (նկ.27):



Նկ.27. Գարնանային.


ա) նիմֆա, բ) իմագո

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Վատ են թոշում, որի պատճառով բնակվում են ջրամբարների մոտակայքում, որտեղ զարգանում են դրանց թրթուները:

#### **Կարգ 9. Էմբիներ (Embiodea)**

Միջին չափի միջատներ են, վարում են թաքնված կենսակերպ, հանդիպում են քարերի տակ, հողում: Միայն երեկոյան ժամերին դուրս են գալիս հողի մակերես: Էմբիների մարմինը երկարավուն է, գլանաձև, բավական փափուկ, գորշ, շագանակագույն: Գլուխը մեծ է, կրում է ոչ մեծ ֆասետային աչքեր: Բեղերը համեմատաբար կարծ են, թելանման: Բերանային մասերը կրծող տիպի են: Ստորին շրթունքը ոչ պարզ կերպով մասնատված է:

Թևերը թաղանթակերպ են, ոչ մեծ, թույլ արտահայտված երկայնակի և լայնակի ջղերով: Ետին թևերը չեն միանում առջևիններին (Նկ.28):



Նկ. 28. Դսկայական եմբի:

1- անք էզ, 2- թևավոր արու

Առաջնակուրժքը կարծ է, միջնակուրժքը՝ երկար: Փորիկը տասհատվածանի է, վերջին հատվածը կրում է երկուհատվածանի ցերկիներ: Արուների մոտ ցերկիները համաչափ չեն:

Ոտքերը վագոր են, կարճ, թաթերը՝ երեքհատվածանի: Առջևի թաթի առաջին հատվածն հաստացած է, և նրա մեջ գտնվում է մամող գեղձը: Էմբիները ստեղծում են ոստայնային խողովակների համակարգ: Սրանք նույն արագությամբ կարող են վազել և ետ, և առաջ: Երբ նրանք վազում են ետևից դեպի առաջ, ցերկիները բեղիկների գործառույթ են կատարում:

Բազմանում են ոչ միայն հողում, այլև ժառերի վրա, ուր կեղևի տակ կառուցում են ոստայնածեն բներ: Զվարդում են գարնանը: Զարգացումը թերի կերպարանափոխությամբ է:

Սնվում են բույսերի մնացորդներով, երբեմն գիշատիչ կյանք են վարում: Բնորոշ է կամիրալիզմը, բազմացման շրջանում հասուն առանձնյակները, մասնավորապես արուները, սնվում են սեփական մատղաշներով:

## Կարգ 10. Սաշկաթևավորներ կամ ականջմտուկներ (*Dermoptera*)

Մարմինը տափակ է, ճկուն, երկարությունը 4-40 մմ է, գլուխը՝ սրտածն, ուղղված առաջ, բերանային մասերը կրծող են, բեղերը՝ թելանման: Արտաքին ծածկությանը խիստ խիտինացված են: Պարզ աչքեր չունեն: Առջևի թևերը կարճ են և վերածվել են ամուր, կաշվենման վերնաթևերի ու գրկվել ջղերից: Ետին թևերը թաղանթային են, լայն, որոնց առջևի եզրերին կա եղջրացած հատված, որը կոչվում է **թևային թիթեղ**. Դանգիստ վիճակում ներքին թևերը ծալվում են հովհարածն և ըստ լայնության երկատվում են այնպես, որ ամբողջ թաղանթավոր մասը պաշտպանվում է վերնաթևերի կողմից և միայն թևային թիթեղն է դուրս մնում վերնաթևերից: Ուժեղ կարծ են, վազող, թաթերը կազմված են երեք հատվածներից (նկ.29):



Նկ. 29. Ականջմտուկ

Փորիկն ունի տաս տերգիտ, ստերնիտներն արուների մոտ 9 են, էգերի մոտ՝ 7: Փորի երրորդ և չորրորդ տերգիտների կողքերին հաճախ լինում են ոչ մեծ թմբիկներ, որոնցում տեղադրվում են հոտավետ նյութ արտադրող գեղձերը:


Փորը վերջանում է երկար, միհատվածանի ամուր աքցանով, որը ծասփոխված ցերկի է: Էգերի աքցաններն իրար զուգահեռ են, իսկ արուներինը լավ զարգացած, մանգաղածն և ավելի մեծ են:

Աքցանների հիմքի միջև գտնվում է խիտինային հավելված՝ պիզիդիում:

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Դիմնականում գիշերային կենսակերպ են վարում: Տերեկը թաքնվում են քարերի, քափված տերևների տակ, ծառերի կեղևների արանքում: Սնվում են բուսական և կենդանական մնացորդներով, երբեմն կենդանի բույսերով: Առանձին տեսակներ զգալի վնաս են պատճառում: Տարվա մեջ տալիս են մեկ սերունդ: Չմեռում են ծվի, թրուրի փուլում և հասուն վիճակում:

#### Կարգ 11. Բշտիկառոտանիներ կամ տրիպուեր (*Trisanoptera*)

Մանր, երկարավուն մարմնով միջատներ են: Մնացած միջատներից տարբերվում են զլիսի, թևերի և ոտքերի յուրահատուկ կառուցվածքով: Գլուխը եռանկյունի է և ստորին շրթունքի շնորհիկ կոնի ծև է ստանում: Բեղերը կարծ են, կազմված 6-9 հատվածներից: Բերանային մասերը ծակող-ծողող են, կոնածեն, ուղղված ներքև և ետ (նկ.30):



Նկ. 30. Ծխախտտի տրիպս.

1- հասուն տրիպս, 2- ձվեր, 3 - 4- թրուրներ, 5- նիմֆա:

Սնվում են բույսերի հյութով: Առանձին տեսակներ գիշատիչներ են, սնվում են մանր միջատների և տղերի հյութով:

Երկու գույգ թևերը նեղ ու երկար են, եզրերում ունեն երկար մազեր և 1-2 երկայնական ջղեր:

Երկարատև թոփչքի ընդունակ չեն: Մի շարք տեսակների թևերը կարճացած են կամ լրիվ բացակայում են: Երբեմն միևնույն տեսակը բնության մեջ համդիպում է 3 ձևով՝ **երկարաքեզ** (*forma macroptera*), **կարճաքեզ** (*forma brachiptera*) և **անքեզ** (*forma aptera*):

Ոտքերը կարճացած են՝ հաստացած ազդրերով: Թաթերը կազմված են 1-2 հատվածներից և ավարտվում են բշտիկանման ծծիչներով: Որոշ տեսակներ կարող են կտրուկ թոփչներ կատարել: Լավ արտահայտված է սեռական դիմորֆիզմը: Էգերը չափերով մեծ են արուներից: Մեծ մասն ապրում է ծաղկաբույլերի մեջ:


Զվերը խոչոր են՝ թափանցիկ թաղանթով: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Զվի զարգացումը տևում է մի քանի օրից մինչև 2 շաբաթ:

Առանձին տեսակներ համարվում են բույսերի վիրուսային հիվանդությունների տարածողներ և այգիների ու անտառ-տնտեսությունների վնասատումներ:

#### Կարգ 12. Խոտհարներ (*Coccoognatha, Psocoptera*)

Սանր միջատներ են՝ 1-5 մն երկարությամբ, բույլ կարծրացած ծածկույթով: Բեղերը թելանման են՝ կազմված 11-40 մազապատ հատվածներից: Բերանային ապարատը կրծող տիպի է: Վերին ծնոտները հզոր են: Ստորին ծնոտի ներքին թիակը մեկուսացել և երկար փայտիկի ձև է ստացել, որը ներթափանցում է գանգի մեջ և տեղափորվում հատուկ պարկում: Փայտիկի արտաքին ծայրերի վրա կան ատամներ: Մկանների շնորհիվ այս օրգանը շարժուն է, ընդունակ է դուրս նետվել դեպի առաջ, կողմ և պտույտներ կատարել: Այդ փայտիկի օգնությամբ միջատը փշրում-մանրացնում է կերը: Խոտհարները սնվում են կանաչ ջրիմուռներով, քարաքոսերով, բորբոսով և մակաբույժ սնկերով:

Թևերը երկու գույգ են, թաղանթանման, հանգիստ վիճակում ծալվում են տանիքածեն: Ետին թևերն առջևիններից փոքր են, երբեմն կարծ կամ բացակայում են (նկ.31):



Նկ.31. Խոտհարներ.


Ոտքերը վազող են, բարակ 2-3 հատվածներից կազմված թաթերով: Ետին ազդրերը երբեմն հաստացած են: Փորիկը ինը հատվածանի է: Եգը երբեմն ունի կարծ ձվադիր:

Լավ արտահայտված է սեռական երկճևությունը: Արութերի բեղերն ավելի մազապատ են, իսկ աչքերը գրեթե գնդաձև:

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Եգերը ձվադրում են տերևների, ճյուղերի վրա՝ ձվերը ծածկելով ոստայնով: Առանձին տեսակներ, օրինակ՝ **գոթի ողիլը** (*Liposcelis divinatorius*), որն անքև է, սպիտակ, վնաս է հասցնում միջատների հավաքածուներին և հերքարիումներին: Որոշ տեսակներ հանդիպում են տներում և թանգարաններում: Քիչ ավելի խոշոր է **փոշու ողիլը** (*Trogium pulsatorium*), որն ունի մինչև 2 մմ երկարություն, տարբերվում է սաղմնային թևերի առկայությամբ և բաց դեղնավուն գույնով, ընդ որում, փորիկի վերին մասում կան կարմրավուն թևեր, որոնք առաջացնում են լայնական շերտեր: Կարող են հանդիպել սենյակի փոշոտ անկյուններում: Խոտհարները ծայներ են արծակում՝ գլխի առջևի մասը խփելով թղթերին:

### **Կարգ 13. Փետրակերներ (*Mallophaga*)**

Մանր, 0.5-11 մմ երկարությամբ, անթև, տափակ մարմնով, խոշոր գլխով միջատներ են: Թոշունների և կաթնասունների արտաքին մակարույժներ են: Ունեն կարծ, 3-5 հատվածներից կազմված թեղեր, որոնք հանգիստ վիճակում թաքնված են թեղային փոսիկներում: Բերանային ապարատը կրծող է: Սիզնակուրծքն ու հետնակուրծքն հաճախ միաձուլվում են՝ առաջացնելով մեկ հատված: Ոտքերը վազող են կամ բռնող (նկ.32):



Նկ. 32. Փետրակեր (բաղի մակարույժ)

Զվարդում են ամբողջ տարվա ընթացքում: Զվերը կափառիչով են, կույտերի ձևով կաշում են փետուրներին և զարգանում են թերի կերպարանափոխությամբ, որը տևում է մոտ 2 շաբաթ: Սնվում են տիրոջ մաշկի մասնիկներով կամ արյունով:

Այս կարգի ներկայացուցիչները մակաբուծում են հավի, աղավնու և բաղի փետրածածկույթում: Բժշկական տեսանկյունից հետաքրքիր են մազակերները, որոնք կարող են լինել հելմինտների միջնորդ տերեր:

### **Կարգ 14. Ոզիլներ (*Anoplura*)**


Ոզիլները մարդու և կաթնասուն կենդանիների մշտական արտաքին մակարույժներ են: Մանր, 1-5 մմ երկարությամբ, անթև,

տափակ մարմնով միջատներ են: Գլուխը նեղ է, կրում է կարծ, թելանման, 3-5 հատվածներից կազմված բեղեր: Աչքերը ապաճած են կամ բացակայում են: Առանձին տեսակներ ունեն երկու պարզ աչքեր: Բերանային ապարատը ծակող-ծծող տիպի է և տեղադրված գլխի մեջ՝ հատուկ պայուսակում, որտեղից դուրս է հանվում կեր ընդունելու ժամանակ (նկ. 33):

Կրծքային հատվածները միաձուլված են: Միջնակրծքի վրա տեղադրված են զույգ շնչառական անցքեր: Ոտքերը կարծ են՝ բռնող, մեկհատվածանի թաթով, որը վերջանում է մեկ ճանկով:

Փորիկը սովորաբար կրծքից լայն է և կազմված ինը հատվածից:

Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Չվերը (անիծները) կպչում են մազերին և հագուստին՝ սեռական գեղձերից արտադրվող արտազատուկի շնորհիվ:



Նկ.33. Որիլներ.

1- գլխի որիլ, 2- հագուստի որիլ, 3- ցայլթի որիլ

Թթրուրները նման են հասուն միջատներին: Երեք անգամ կատարում են մաշկափոխություն: Մեկ սերնդի զարգացման տևողությունը 24-30 օր է:

Թթրուրները և հասուն ոչիլները սնվում են արյունով:

Սարդու մարմնի վրա մակաբուծում են *Pediculus* և *Phthirus* ընտանիքներին պատկանող երեք տեսակի ոչիլները՝

1. *Գլխի ոչիլ (Pediculus humanis capitis)*

2. *Դագուստի ոչիլ (Pediculus humanis humanis)*

3. *Ցայլքի ոչիլ (Phthirus pubis L.)*

Դագուստի և գլխի ոչիլները, բացի մակաբույժ լինելուց, համարվում են բծավոր և հետադարձ տիֆի հարուցիչների փոխանցողներ:

#### **Կարգ 15. Դակասարաքն կնճիքավորներ (*Homoptera*)**

Այս կարգի մեջ մտնող միջատները ըստ ծեփի և մեծության շատ բազմազան են, ունեն ծակող-ծոնող թերանային ապարատ և երկու զույգ թաղանթավոր, ոչ շատ ջղերով թևեր: Ետին թևերն համեմատաբար փոքր են առջևիններից: Մի քանի տեսակների օրինակ՝ *լվիճների* ետին թևերը խիստ ապաճած են, իսկ *կոկցիդների* կամ վահանակիրների մոտ դրանք նման են խոզանի կամ թեփուկի: Թևավոր լինում են միայն արուները (Ըկ. Նկ. 37-38):

Կոկցիդների էգերը, երբեմն նաև արուները և լվիճների տարբեր տեսակի առանձնյակներ միանգամայն անթե են:


Թաթերը կազմված են 1-3 հատվածներից: Կարգի մեջ մտնող տեսակները հիմնականում փոքր են և նուրբ, միայն ցիկադների մեջ կան խոշոր տեսակներ:

Կարգը բաժանվում է 5 ենթակարգերի՝ *ցիկադներ, տերևալվիկներ, ալեյրողիներ, լվիճներ և կոկցիդներ* կամ վահանակիրներ.

#### **Ենթակարգ՝ Ցիկադներ (*Cicadinea*)**

Խոշոր, մանր կամ միջին չափերի միջատներ են: Բարդ աչքերը մեծ են, ունեն 3 պարզ աչքեր: Բեղերը երեքհատվածանի են՝ ծայրերին երկար խոզանով: Բոլոր թաթերը երեքհատվածանի են: Ետին ոտքերը թռչող են՝ երկար ազդրերով և սրունքներով: Երկու զույգ թևերը լավ զարգացած են, թաղանթային կամ էլ առջևի զույգն

ավելի ամուր է, կաշվենման: Թևերի վրա լավ զարգացած են լայնակի և երկայնակի ջղերը (նկ.34):



Նկ.34. Ցիկադ. ա) մեջքի կողմից, բ) փորի կողմից.  
1- բեղեր, 2- բարդ աչքեր, 3- պարզ աչքեր, 4 - կլավուս, 5 - կնճիթ, 6 - ձվադիր

Փորիկի վրա գտնվում է ձայնային օրգանը:

Թրթուրները նման են հասուն միջատներին, բայց ունեն թերզարգացած թևեր:

Բոլոր տեսակները բուսակեր են: Առանձին տեսակներ վնասատուներ են կամ բույսերի վիրուսային հիվանդությունների փոխանցողներ:


### **Ենթակարգ՝ Տերևալվիկներ (*Psillinea*)**

Մանր միջատներ են, արտաքինից նման են լվիճներին: Ունեն խոշոր գլուխ, երկու խոզաններով վերջացող և տասը հատվածներից կազմված թեղիկներ, երկու զույգ թաղանթային թափանցիկ թևեր: Ետին ոտքերը ցատկող են՝ հաստացած ազդրերով:

Թարերը երկիատվածանի են և ծայրերին ունեն ծծիչ: Թևերի լայնակի ջղերը զարգացած չեն, իսկ առջևի թևերի վրա լավ երևում է հաստացած եզրային ջիղը (նկ.35):

Թրթուրների (նիմֆաներ) մարմինը տափակ է, նման չեն հասուն միջատներին: Կարող են ապրել գաղութերով: Դայտնի են տեսակներ, որոնք վնաս են հասցնում գյուղատնտեսությանը, բույ-


սերի վիրուսային հիվանդությունների փոխանցողներ են: Կարող են  
առաջացնել նաև **գալեր**.



Նկ.35.  
Տերևակիկ

### Ենթակարգ՝ Ավելյողիդներ կամ սպիտակաքրևեր (*Aleyrodoidea*)

2նմ երկարությամբ միջատներ են: Թևերը և մարմինը  
ծածկված են ալրամնան փոշիով: Մարմինը դեղնականաչավուն է՝  
երբեմն մուգ կետերով: Թևերը մեջքի վրա ծալվում են տափակ ձևով:  
Բեղիկները կազմված են 3-7 հատվածներից. առաջին երկուսը  
գնդածն են, իսկ վերջինը փշաննան ելուստով է: Ապրում են տերևի  
ստորին կողմում: Չվից դուրս եկած թրթուրը շարժուն է և մի քանի  
ժամ հետո ամրանում է բույսին: Դաշորդ փուլերն անշարժ են:  
Դասունացած թրթուրն իր մարմինը ծածկում է մոնային արտազա-  
տուկով և մինչև հասուն միջատի վերածվելը չի սնվում: Զնեռում են  
հասուն թրթուրի փուլում: Բույսերի վնասատուներ են (նկ. 36):




Նկ.36. Սպիտակաքրևեր

## Ենրակարգ՝ Լվիճներ (*Aphidoidea*)

Մանր, նուրբ կամաչավուն, դեղին կամ մուգ գույնի երկու զույգ թափանցիկ թևերով միջատներ են: Դաճախ թևերը թացակայում են: Բեղերը կազմված են 3-6 հատվածներից՝ փշային ելուստներով: Վերջին հատվածը սրացած է: Թաթերը երկուհատվածանի են: Առջևի ոտքերը թռչող են: Փորիկը կազմված է 9 հատվածներից: Դինգերորդ հատվածի երկու կողմերին գտնվում են հյութ արտազատող խողովակները: Լվիճների մեծ մասն արտադրում է շաքարահյութ, որով սնվում են մրջյունները:

**Բազմանում են հետերոգոնիայի տիպով** (սեռական և անսեռ սերունդների հերթափոխությամբ): Լվիճներին բնորոշ է **պոլիմորֆիզմը և կուսածնությունը**. Հետերոգոնիան կապված է լվիճների սեղոնային միգրացիայի, տարբեր բույսերի վրա ապրելու հետ:

Խիստ վնասատու ներկայացուցիչներից է *Phylloxera*-ն, *Vastatrix*-ը, որն ապրում է խաղողի տերևների և արմատների վրա, արյունավիճը (*Eriosoma lanigerum*), պտղատու ծառերի վնասատուն, կաղամքի լվիճը (*Brevicoryne brassicae*), խնձորենու լվիճը (*Aphis pomi*, նկ.37):



Նկ.37. Խնձորենու լվիճը.


ա - ձմեռող ծվերը խնձորենու վրա, բ - վնասված տերևներ, ց - անքն եգը

Լվիճներն արագ են բազմանում: Ամառվա ընթացքում կարող են տալ մինչև տասնհինգ սերունդ և մեծ վնաս են հասցնում տարրեր բույսերի:

### Ենթակարգ՝ Կոկցիդներ կամ վահանակիրներ (*Coccinea*)

Մանր միջատներ են՝ լավ արտահայտված սեռական երկ-ձևությամբ: Արուներն ունեն մեկ զույգ թևեր, 5-11 հատվածներից կազմված թեղեր և միահատված թաթերով վերջացող լավ զարգացած ոտքեր: Բերանային ապարատը ապաճած է, չեն սնվում:

Արուներն եգերից փոքր են (երբեմն 50-100 անգամ): Եգերը չունեն թևեր, ոտքերը հաճախ ապաճած են, սովորաբար անշարժ են: Ունեն լավ զարգացած կնճիթ: Մարմինը ծածկված է մոնային արտազատուկով, որը վահանի նման է: Թրթուրները նման են եգերին (նկ. 38):



Նկ. 38. Կոկցիդ

Մեծ վնաս են հասցնում պտղատու այգիներին, օրինակ՝ ստորակետանման որդանը (*Zepidosaphes ulm*.), որը բնակվում է խնձորենու և տանձենու վրա: Որդանների առանձին տեսակներ, օրինակ՝ լինական որդանը, մեքսիկական որդանը օգտագործվում են բարձր որակի օրգանական կարմիր ներկ՝ կոչենիլ, ստանալու

համար: Որդաններից Յայաստանում հայտնի է որդան կարմիրը՝ *Tryonopterus multivorus*-ը: Առանձին տեսակներից ստանում են շելակ և սպիտակ մոմ:


#### **Կարգ 16. Կիսակարծրաքևավորներ (Heteroptera)**

Միջին չափերի կամ խոշոր, ցամաքային, մասամբ ջրային կենսակերպ վարող միջատներ են: Բեղիկները թելանման են՝ կազմված 4-5 հատվածներից: Երկու լավ զարգացած բարդ աչքերից բացի ունեն նաև երկու պարզ աչքեր, որոնք երբեմն կարող են նույնիսկ բացակայել: Բերանային ապարատը ծակող-ծծող տիպի է՝ 3-4 հատվածներից կազմված կնճիթով, որն ամրացած է գլխի առջևի եզրին և հանգիստ վիճակում ծալվում է գլխի տակ: Բուսական հյութով սնվողների կնճիթը, գիշատիչների և մակաբույժների համեմատ, ավելի երկար է:

Առաջնակուրծքը լայն է և մեծ: Ծալված թևերի դեպքում միջնակուրծքը վերկից երևում է վահանի տեսքով, երբեմն կարող է ծածկել ամբողջ փորը: Նետնակրծի երկրորդ և երրորդ հատվածների սահմանում գտնվում են հոտավետ գեղձերի մեկ զույգ անցքեր: Ոտքերը վազող են, քայլող, լողացող կամ ցատկող: Թաթերը կազմված են մեկ, երկու կամ երեք հատվածներից: Բոլոր դեպքերում դրանք վերջանում են երկու ճանկով:

Թևերը երկու զույգ են: Վերնաթևերի հիմքային բաժինը կաշվենման է, խիտինային և ամուր, իսկ ծայրային բաժինը թաղանթավոր է և թափանցիկ: Թևերի կաշվեկերպ մասը շեղ կարով բաժանվում է կորիումի և կլավիուսի, ընդ որում, կորիումը՝ թևի արտաքին մասը, երբեմն բաժանվում է գագաթային հատվածի՝ կունեուսի և արտաքին եզրի՝ լմբոյիումի (նկ.39):

Յանդիպում են տեսակներ, որոնց վերնաթևերի թաղանթավոր մասը կարծ է կամ բացակայում է: Յանգիստ վիճակում միջատի թևերը մարմնի վրա սովորաբար ծալվում են տափակ դիրքով, հազվադեպ՝ տանիքածել: Վերջինի դեպքում ետին ոտքերը լինում են լողացող: Կիսակարծրաքևավորների թևերը հաճախ լրիվ զարգացած չեն կամ կարծ են, երբեմն բացակայում են:



Նկ.39. Փայտողիլի արտաքին կառուցվածքը.

ա) բեզի կողմից, բ) փորի կողմից


- 1- բեղեր, 2- բարդ աչք, 3- ծողուակ, 4- պարզ աչք, 5- կնճիք, 6- առաջնամեջք,  
7-առաջնակուրծք, 8- միջնակուրծք, 9- վահան, 10- վերնաթևի ամուր մաս,  
11- վերնաթևի թաղանթային մաս, 12- հետնակուրծք,  
13- հոտավետ գեղձերի անցք, 14- շնչառական անցքեր,  
I-VI - փորիկի հատվածներ

Փորիկը կազմված է 7-8 հատվածներից: Զարգանում են թերի կերպարանափոխությամբ: Թթվային բարձրացումը շատ նման են հասուն միջատներին, բայց ունեն քների սկզբնակներ:

Զրային կիսակարծրաթևավորները հիմնականում գիշատիչներ են, ցանաքայինները սնվում են բույսերի հյութով՝ լուրջ վնաս հասցնելով գյուղատնտեսությանը: Շատերը մակարութային կենսակերպ են վարում՝ ապրում են թռչունների թներում, չղթիկների և մկների վրա՝ սնվելով արյունով: Նույն խմբին է պատկանում նաև նարդու բնակարանում ապրող փայտողիլը (*Cimex lectularis*): Կան նաև գիշատիչ տեսակներ, որոնք սնվում են բուսական և կենդանական մնացորդներով, բամբակենու գիշերաթիթեռի ծվերով և այլն:

## Կարգ 17. Կարծրաքևավորներ կամ բզեզներ (Coleoptera)

Գլուխը կլորավուն է, առջևի մասը նման է կնճիրի կամ գլխախողովակի, որի ծայրում գտնվում է բերանը: Աչքերը ծվածեն, կլորավուն կամ լոբածեն: Պարզ աչքերը մեկ-երկուսն են կամ բացակայում են: Բեղերն ամրացած են ճակատի կամ այտերի վրա, բազմածեն են, հիմնականում կազմված 11 հատվածներից: Բերանային մասերը կրծող տիպի են, վերին ծնոտները լավ խիտինացված են, ուժեղ, ներքինը՝ նորրը, ունի մեկ զույգ չորս, իսկ ստորինը՝ մեկ զույգ երեք հատվածանի շոշափուկներ (նկ.40): Կրծքային առաջին հատվածն ուժեղ զարգացած է: Կրծքային ամեն հատվածի ստորին մակերեսին կան մեկ զույգ փոսիկներ, որոնց մեջ տեղավորված են ոտքերի կոնքերը: Փոսիկների առաջին զույգը փակ է (երբ փոսիկի և կոնքի միջև բաց տարածություն չի մնում), մնացածը՝ բաց (երբ փոսիկի և կոնքի միջև բաց տարածություն է մնում): Ոտքերը լինում են վազող, փորող և լողացող տիպի: Առաջին զույգ ոտքերի կոնքերը լինում են գնդածեն, բրդածեն և լայնական: Թաթերը կազմված են 3-5 հատվածներից՝ հասարակ, ատամնավոր, սանրակերպ և այլն:



Նկ.40. Ցատկող բզեզ.

ա) վերևից, բ) ներքևից.

1- վերին ծնոտներ, 2- ստորին ծնոտների շոշափուկներ, 3- բարդ աչքեր,

4- բեղիկներ, 5- առաջնամեջք, 6- առաջնակուրծք, 7- միջնակուրծք, 8- վերնաքրեր,


9- թռ, 10- հետմակուրծք, 11- ոտքեր, 12- փորիկ

Ամուր, Խիստինացված թևերը հանգիստ վիճակում ծածկում են մեջքի մեջ մասը, ազատ թողնելով միայն վահանիկը: Երբեմն վերնաթևերը կարծ են և փորի 1-7 հատվածները բաց են մնում: Որոշ տեսակներ չունեն ներքին թևեր և չեն կարողանում թռչել: Ետին թևերը թափանցիկ են, թաղանթավոր և ծառայում են թռչքի համար: Փորը տափակ է, նրա առաջին հատվածն ամբողջ լայնությամբ միանում է հետնակրծքին: Վերջին հատվածի տերգիտը վերնաթևերով չի ծածկվում և կոչվում է **աիզիդիում**: Տեսանելի տերգիտները 3-7-ն են, ստերնիտները՝ 5-7: Զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Դամարվում են գյուղատնտեսության վնասատուներ:

Կարգը բաժանվում է երկու ենթակարգերի՝ գիշատիչ և տարակեր բգեցների:




1



2



3



4



5



6

Նկ. 41. Բգեցներ.

- 1- կոլորադյան բգեց, 2- գոմաղբարգեց, 3- ոսկեբգեց,  
4- զատիկ, 5- սևամարմին, 6- գնայրուկ

## **Ենթակարգ՝ Գիշատիչ կամ գիշակեր բզեզներ (*Adephaga*):**


Երրորդ գույց ոտքերի կոնցերը տարածվում են ետի փորի առաջին ստերնիտի միջին մասի լայնությամբ: Ետին ոտքերի կոնցազդրային դարձակները մեծ են, ազդրերին զուգահեռ (նկ. 42): Բերանային շոշափուկները 3 գույց են: Դրա պատճառն այն է, որ ստորին ծնոտների արտաքին

բրերը կերպարանափոխվել և դարձել են ծնոտային երկրորդ գույց շոշափուկներ: Ոտքերը վազող են, բարակ, երկար, թաթերը՝ 5 հատվածանի, բարդ աչքերը ուռուցիկ են և գլուխը դարձնում են առաջնամեջքից լայն: Վերնաթևները ծածկում են փորը: Այն տեսակները, որոնք չունեն ստորին թևեր, վերնաթևները սերտաճել են: Որոշ տեսակներ փորի հետին հատվածում կան տիած հոտ արձակող գույց գեղձեր:

**Ենթակարգ՝ Տարակեր կամ բազմակեր բզեզներ (*Polyphaga*):** Երրորդ գույց ոտքերի կոնցերը տարածվում են փորի առաջին ստերնիտի ոչ ամբողջ լայնությամբ, և ստերնիտն իր ողջ երկարությամբ նկատելի է: Ետին ոտքերի կոնցազդրային դարձակները փոքր են և միշտ թեքությամբ հարում են ազդրի հիմքին (նկ. 43): Բերանային շոշափուկները երկու գույց են, գլուխը կլորավուն կամ վահանածն է, որի առաջնային ծայրը առանձին տեսակների նոտ վերածվել է գլխախողովակի, ուր տեղավորված են կրծող բերանային ապարատի մասերը: Բեղերը 11 հատվածից ավել չեն ունենում, սակայն



Նկ. 42. Գիշատիչ բզեզի ետին կոնքը և փորի ստերնիտները




Նկ. 43. Տարակեր բզեզի ետին կոնքը և փորի ստերնիտները

61

Երբեմն կարող են գերազանցել մարմնի երկարությունը: Որոշ արուների վերնածնոտները մեծ են՝ հավելվածներով կամ ճյուղերով: Վերնաթեսերը կարծ են և ետին թևերը մի քանի անգամ ծալվում են դրանց տակ: Ոտքերը վագող, լողացող կամ ցատկող տիպի են, թաթերը 3-5 հատվածնի: Վերջին հատվածն իր վրա կրում է գույգ ծանկեր: +

#### Կարգ 18. Լվեր (*Aphaniptera*)

Մանր, անթև միջատներ են: Մարմինը կաշվենման է՝ կողքերից խիստ սեղմված: Բեղերը կարծ և հաստ են, երեքհատվածանի, գտնվում են բեղային փոսիկներում: Բերանային ապարատը ծակող-ծօռող տիպի է: Ետին ոտքերը երկար են, լավ զարգացած և օգնում են ցատկելուն: Փորիկը ութիատվածնի է՝ նստած տիպի: Զվերը դնում են բնակարանի հատակի ծեղերում, չոր աղբի մեջ: Թրթուր-ները զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Կաթնասուն-ների և թռչունների մակարույժներ են (նկ. 44):



Նկ.44. Մարդու լու:

1- հասուն միջատ, 2- թրթուր, 3- հարսնյակ


Դամաճարակաբանական նշանակություն ունի **մարդու լուս** (*Pulex irritans*). Դամարվում են ժանտախտի և ժապավենածն որդեռի փոխանցողներ:

#### **Կարգ 19. Մեծաքանիներ կամ կախրևանիներ (*Megaloptera*)**

Միջին չափերի կամ խոշոր միջատներ են՝ 8-15 մմ երկարությամբ, միանման քափանցիկ, ցանցանման թևերով: Բեղերը խոզանակերպ են, բազմահատված:

Բերանային ապարատը կրծող տիպի է՝ ուղղված դեպի առաջ: Ֆասետային աչքերը խոշոր են: Առաջնակուրծքը լայն է: Բոլոր քարերն իինգիատվածանի են: Էգը ծվաղիր չունի: Թրթուրներն ապրում են ջրում: Էգը մի քանի շարքով դնում է նոխրագույն ծվեր: Չվի գագաթին կա երկար հավելված: Թրթուրները գիշատիչ են, սնվում են ջրային անողնաշարավոր կենդանիներով: Դայտնի է **սովորական կախրևը** (*Sialia lutaria*), որը սև գույնի է՝ գլխի և կրծքի վրա դեղին պտերով (նկ.45):


Թևերը բացված վիճակում ունեն 18 սմ երկարություն:



Նկ.45. Սովորական կախրևանին և թրթուրը

## Կարգ 20. Ուղտիկներ (*Raphidioptera*)

Միջին չափերի, երկար, շարժուն առաջնակրծքով և երկարավուն գլխով գիշատիչ միջատներ են: Բեղիկները թելաննան են, բազմահատված: Աչքերը համեմատաբար փոքր են: Պարզ աչքերը երեմն առկա են, երեմն բացակայում են: Բերանային ապարատը կրծող տիպի է: Թևերը 2 զույգ են, թաղանթանման, լավ արտահայտված պտերոստիգմայով: Ետին թևերն առջևիններից մի փոքր կարծ են ու նեղ: Դանդիստ վիճակում դրանք մարմնի վրա ծալվում են տանիքածեն: Թաթերը չորսհատվածանի են: Երրորդ հատվածը լայն է: Էգերն ունեն երկար ծվաղիր: Թրթուրները գիշատիչ են, ապրում են ծառերի տակ, ունեն իլիկածն մարմին: Գլուխն ու առաջնա-կուրծքը խիստ կարծրացած են, շագանակագույն, իսկ կրծքի մնացած հատվածները և փորիկը փափուկ են, ավելի բաց գույնի՝ մարմարանման նախշերով: Զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ (նկ.46):




Նկ.46. Ուղտիկը և քրթուրը

## Կարգ 21. Ցանցաթևավորներ (*Neuroptera*)

Միջին չափերի կամ խոշոր, շատ նուրբ, մեծ թևերով և բարակ մարմնով միջատներ են: Բերանային ապարատը կրծող տիպի է և գլխի հետ ուղղված է դեպի ներքև: Դասուն տեսակներն ունեն

քայլող, կանաչավուն ոտքեր: Բեղերը տարբեր ծևի են՝ թելանման, գնդասեղածն, սամրածն, խոզանակերպ և տեղադրված են աշքերի միջև: Առաջնակուրծքը մեծ է և շարժուն հողավորված է միջնակըթին: Ոտքերը վազող են, հինգհատվածանի, երբեմն առաջին զույգը բռնող է: Երկու զույգ թևերը միանման են, մերկ և ցանցանման: Առօսի թևերը հաճախ ավելի լայն են ետիններից: Փորիկը զուրկ է հավելումներից (նկ.Նկ.47-49):


Զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Դասուն և թրթուր վիճակում գիշատիչ են: **Թրթուրների մարսողությունն արտաօրգանիզմային է՝** ծամիչների սուր ծայրերով թրթուրը ծակում է որսի մարմինը, ներմուծում մարսողական հյութ, որը լուծում է հյուսվածքները, և միջատը ներծծում է հեղուկ կերը: Սնվում են գլխավորապես միջատներով, մեծ մասամբ վարում են ցամաքային կենսակերպ: Որոշ տեսակներ ապրում են ջրում: Օգտակար միջատներ են: Ոչնչացնում են այգիների և անտառների վնասատուներին:



Նկ.47. 1-սովորական ոսկեաչիկ, 2-ասկալաֆ

Այս կարգին են պատկանում **սովորական ոսկեաչիկը** (*Chrysopa rufa*, նկ. 47.1), որը սնվում է լվիճներով, **մրջնառյութները** (*Mymeleo formicarius*, նկ. 48 ), որոնց թրթուրներն ավագի մեջ

պատրաստում են ծագարածև փոս, ուր բնակվում են և սնվում այդ ծագարի մեջ ընկնող միջատներով: Կան նաև կարմիր գոքում ընդգրկված երկու տեսակներ՝ *ասկալաֆը* (*Ascalaphus sp.*, նկ.47.2.) և *թելապոչիկավորը* (*Nemoptera sp.*, նկ.49):



Նկ.48. Մրջնառյուծ



Նկ.49. Թելապոչիկավոր

## Կարգ 22. Թաղանքաքևավորներ (*Hymenoptera*)

Տարբեր չափերի միջատներ են՝ 0.5-40 մմ երկարությամբ:

Գլուխը միշտ ուղղված է դեպի ներքև, շարժուն կերպով միացած է կրծքին: Աչքերը խոշոր են, ունեն երեք պարզ աչիկներ, որոնք եռանկյունաձև դասավորված են ճակատի վրա: Բեղերը երկար են, հատվածների տարրեր թվով, թելանման, խոզանակերպ, գնդասեղանման, սանրակերպ, սղոցածև, երբեմն փետրածև: Բերանային ապարատը կրծող կամ կրծող-լիզող տիպի է, երբեմն՝ ապածած:

Կրծքի բոլոր բաժինները միաձուլված են: Միայն առանձին տեսակների առաջնակուրծքը շարժուն կերպով հողավորված է

միջնակրծքի հետ: Կրծքին է միացել նաև փորիկի առաջին հատվածը, որը կոչվում է **միջանկայ՝ պրոպերիում:**


Թաղանթաթևավորներին բնորոշ են երկու գույգ թաղանթանման թևերը, որոնք մերկ են և թափանցիկ, ջղավորումը պարզ է, իսկ երեմն կարող է բոլորովին բացակայել: Ետին գույգ թևերն ավելի փոքր են, քան առջևինները: Կարգի մեջ կան նաև անթև տեսակներ (նկ.50):

Ոտքերը հիմնականում վազող տիպի են: Սրունքները գագաթային մասում և ներքին եզրին ունենում են շարժուն խթաններ: Թաթերը հինգ, երեմն չորս կամ երեք հատվածանի են: Վերջին հատվածը միշտ իր վրա կրում է երկու ճանկ: Ընտանի աշխատավոր մեղվի ետին սրունքի արտաքին մակերեսն ունի փոքր խորություն, որը գրեթե մազազուրկ է, հարթ և փայլուն, ամբողջ երկարությամբ եղրավորված է երկու շարքով դասավորված երկար, ամուր մազերով: Ոտքի այդ ձևափոխված մասը կոչվում է **զամբյուղ:** Նույն ոտքի առաջին հատվածը երկար է, լայն, ներսի մակերեսը պատված է խիտ և խոշոր մազերից կազմված 10-12 լայնական շարքերով: Թաթի այդ հատվածը կոչվում է **խոզանակ.** Զամբյուղը և խոզանակը ծաղկափոշի հավաքելու հարմարանքներ են:

Փորիկը միանում է կրծքի հետ ամբողջ լայնությամբ կամ մաշկային բարակ ցողունիկի սեղմվածքի միջոցով:

Տարբերում են երեք տիպի փորիկ՝ **ճատած, կախված և ցողունավոր:** Եգը փորիկի վերջում կրում է ծվաղիր, որը սղոցարարների մոտ կարծ է, հեծյալների մոտ՝ երկար: Մեղուների և կրետների ծվաղիրը վերածվել է խայրի:

Զարգանում են լրիկ կերպարանափոխությամբ: Թրթուրները լինում են անոտ և լավ զարգացած գլխով, բացառիկ դեպքերում ունենում են 3 գույգ կրծքային իսկական ոտքեր և բազմաթիվ փորային կեղծ ոտքեր: Թրթուրների մեծ մասն ունի մանող գեղձ, և հարսնյակավորումը կատարվում է բոժոժությամբ: Որոշ տեսակների հարսնյակներ միանգամայն բաց տիպի են: Թաղանթաթևավորները սնվում են հիմնականում բույսերով, առանձին տեսակներ՝ ծաղիկների նեկտարով, լվիճների արտազատած հյութով, ծաղկափոշով: Կան գիշատիչ և մակաբրույժ տեսակներ:




Նկ. 50. Թաղանթաքևավորներ.

- 1- մեղվագայլ, 2- հաստագլուխ կրետ,
- 3- բրդառտ մեղու, 4- կարմրակուրծք փայտատաշ մրջյուն

Կարգը բաժանվում է երկու ենթակարգերի՝ **նստափորիկ թաղանթաքևավորներ** կամ բուսակերներ (*Sympyta*) և **ցողունավոր թաղանթաքևավորներ** (*Aroceta*)

Նստափորիկների ենթակարգին են պատկանում սղոցարար-ները և եղջերապչավորները (Նկ.51): Ցողունավորներից են հեծյալները, տարբեր կրետներ, իշամեղուները, մեղուները, մրջյունները և այլն :



Նկ. 51. α) սոճու սղոցարար, β) սոճու եղջերապչ

Թաղանքաթևավորներից առանձին տեսակներ մեծ վնաս են հասցնում բույսերին: Սղոցարարների թրթուրները կրծոտում են տերևները, իսկ եղջերապոչավորները բնափայտում անցուղիներ են բացում:

Դեժյալների մեծ մասն ունեն տնտեսական նշանակություն. դրանց օգտագործում են վնասատու միջատների դեմ՝ որպես կենսաբանական պայքարի միջոց:

### Կարդ 23. Կարիճաճանճեր (*Mecoptera*)

Միջին չափերի կամ խոշոր միջատներ են՝ 3-30 մմ երկարությամբ: Գլուխը ծգված է դեպի ներքև, որի ծայրին տեղավորված է կրծող բերանային ապարատը: Բեղերը երկար են, թելանման, ամրացած են բարդ աչքերի միջև (Նկ.52): Ունեն պարզ աչքեր, որոնք երբեմն բացակայում են: Բարդ աչքերը լավ զարգացած են: Կուրծքը փոքր է, որի միջին և ետին հատվածները լավ զարգացած են: Ուտքերը վազող են՝ հինգհատվածանի թաթերով: Թևերը երկու գույգ են, ցանցածև, պատված են կարծ և նոսր մազերով: Ունեն գրեթե միանման ջղավորություն: Մի քանի տեսակների թևերը կարծ են կամ բոլորովին բացակայում են: Փորիկը երկարավուն է՝ կազմված տասը հատվածից: Արուների մոտ 6-10-րդ հատվածներն ուժեղ ծևափոխված են և ուղղված են դեպի վեր՝ կարիճի մարմնի ետին մասի նման: Փորիկի վերջին հատվածի վրա գտնվում են ոչ մեծ ցերկիներ, իսկ արուների մոտ՝ գույգ աքցանանման հավելումներ:



Նկ. 52. Սովորական կարիճաճանճ

Զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Եգը ծվաղրում է հողում կամ փտած ծառերի բներում: Թրթուրները որդաննան են, ունեն 1-8 զույգ կեղծ փորային ոտքեր: Թրթուրները և հասուն միջատները գիշատիչներ են կամ սնվում են մահացած միջատներով և բույսերի մնացորդներով:



#### Կարգ 24. Երկրևանիներ կամ ճանճեր (*Diptera*)

ճանճերի գլուխը մեծամասամբ գնդածև կամ կիսագնդածև է: Այն կրծի հետ միացած է փափուկ մաշկի բարակ կապանով, որի հետևանքով շատ դյուրաշարժ է: Գլխի և մարմնի տարրեր տեղամասեր պատված են բազմաթիվ մազերով: Մազերի թիվը, տեղադրումն ու չափերն ունեն կարևոր կարգաբանական նշանակություն: Բեղերը լինում են թելածև, փետրածև, երբեմն համրիչանման, հազվադեպ՝ սանրակերպ և այլն: Դրանք մի մասի մոտ երկար են, բազմահատված (8-39), իսկ մյուսների մոտ՝ կարծ, երեք հատվածանի:

Ունեն բարդ, լավ զարգացած, հաճախ գեղեցիկ գունավորված աչքեր: ճանճերից շատերն ունեն նաև 2-3 պարզ աչքեր:

Բերանային մասերը տարրեր ներկայացուցիչների մոտ տարրեր կառուցվածք ունեն: Այսպես՝ մոծակների էգերի մոտ ծակողծող տիպի են, քոռուկների էգերի մոտ՝ կտրող-լիզող, իսկ սենյակային ճանճի մոտ՝ լիզող: Կրծքային 3 հատվածներն ամուր սերտածած են: Առավել լավ զարգացած է միջին կուրծքը, որին միանում են թևերը (նկ.նկ.53-54):

Միջատների այլ կարգերից ճանճերը հեշտությամբ տարրերվում են նրանով, որ ունեն մեկ զույգ (առաջին զույգ) զարգացած, ապակենման, թափանցիկ, հազվադեպ՝ գունավոր թևեր: Երբեմն մեկ զույգ թևերը բացակայում են, և առանձնյակը դառնում է միանգամայն թևատ: Ետին կամ երկրորդ զույգ թևերը ապաչել են: Դրանց փոխարեն առկա են շշածև կամ քորոցածև փոքր հավելվածներ, որոնք կոչվում են «բզզան թևեր»: Շատ ճանճերի բզզան թևերը քողարկված են բլթակածև թեփուկների տակ: Ոտքերը բավական երկար են, բաթերը՝ 3-5 հատվածանի և վերջանում են 2 ճանկով, որոնց տակ լինում են ծծիչներ կամ մկանային բարձիկներ: Որոշ ճանճերի 2 ճանկերի միջև լինում է միջնանկային հավելված կամ էպողիում:

ճանճերի փորիկը կազմված է 3-10 հատվածներից, հիմնականում նստած տիպի է, երբեմն՝ ցողունավոր: Զվարդում են տարրեր օրգանական նյութերի մնացորդներում, քոյսերի և կենդանիների հյուսվածքներում, ջրում: ճանճերը զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Թրթուրները որդանձան են, անոտ, երբեմն ունենում են ոչ հատվածավոր, քոյլ արտահայտված թմբիկներ՝ կեղծ ոտքերի ձևով: Թրթուրի գլուխը փոքր է (մոժակների մոտ բավական զարգացած է): ճանճերի կարգը բաժանվում է 2 ենթակարգերի՝ երկարաբեղ ճանճեր և կարճաբեղ ճանճեր:

### Ենթակարգ՝ Երկարաբեղ ճանճեր (*Nematocera*)

Ենթակարգի մեջ մտնող տեսակների թելերը բաղկացած են 8-39 հատվածներից, բավական երկար, արուների մոտ փետրածն կամ սանրածն են: Բարդ աչքերը կարող են բացակայել: Բերանային մասերը հիմնականում ծակող-ծծող տիպի են: Ոտքերը բարակ են, շատերի մոտ՝ երկար (նկ.53): Թևերը համեմատաբար երկար են, նեղ՝ հիմքում խիստ սեղմված: Փորիկը կազմված է 7-10 հատվածներից, հիմնականում գլանածն է, երկար, վերջանում է ծվաղիրով:



Նկ. 53. Երկարաբեղ ճանճեր.  
ա - մժուկ, բ - մալարիայի մոժակ, ց - մլակ

Զվարդում են ջրում, հողում, օրգանական փտած նյութերի և կենդանի քոյսերի վրա: Մոժակների թրթուրներն ու հարսնյակներն ապրում են կանգնած կամ ճահճացած քաղցրահամ ջրերում: Դրանք խիստ շարժուն են՝ կրծող տիպի բերանային ապարատով: Դասուն ծեսերի գերը (մոժակներ, ֆլեբոտոմուսներ) մարդու և տարրեր կենդանիների ժամանակավոր արտաքին մակարույժներ են, սնվում

Են տիրոջ արյունով և մի շարք հիվանդությունների փոխանցողներ են: Նույն տեսակների արուները սնվում են բույսերի նեկտարով:


Որոշ երկարաբեղ ճանճեր (հեսսենյան ճանճ և այլն) ծվաղրում են բույսերի վրա: Դրանց թրթուրները մտնում են բույսերի հյուսվածքների մեջ, առաջացնում վնասվածքներ, գիստորների ձևով ուռուցքներ: Որոշ տեսակների թրթուրները գիշատիչ են, սնվում են լվիճներով:

### **Ենթակարգ՝ Կարճաբեղ ճանճեր (*Brachycera*)**

Բեղերը կարծ են, երեք հատվածանի: Երրորդ հատվածը համեմատաբար երկար է և իր վրա կարող է կրել պարզ կամ փետրածներ կամ օղակներ /քոռուկներ/: Աչքերը բարդ են, խոշոր: Բերանային ապարատը լինում է ծծող, կտրող-լիզող և լիզող տիպի: Թևերն առհասարակ անգույն են, թափանցիկ, երբեմն ունենում են մուգ շերտեր կամ կետեր: Բզզան թևերը հաճախ պատված են թեփուկներով: Փորիկը նստած տիպի է՝ կազմված 5-8 հատվածներից: Մեծամասնության մարմինը կարծ է և լայն: Կարճաբեղ ճանճերը բազմանում են ծվեր կամ կենդանի թրթուրներ դնելով: Չվերը դրվում են խոնավ հողում, օրգանական նյութերի մնացորդներում, բույսերի և կենդանիների վրա: Թրթուրները զուրկ են պարզ արտահայտված գլխային բաժնից և դրա փոխարեն մարմնի առաջնային ծայրում ունեն, այսպես կոչված, «ծնոտային պարկեր»: Գլխավորապես սնվում են բույսերի հյութը ծծելով (նկ.54):

Կարճաբեղ ճանճերն ունեն տակառածն բռնոժ: Ենթակարգի մեջ մտնում են ճանճերի ճնշող մեծամասնությունը, որոնք կենսածնով շատ բազմազան են: Որոշ խմբեր զարգանում և սնվում են բույսերի վրա՝ զգալի վնաս հասցնելով գյուղատնտեսական մշակովի բույսերին: Դրանցից են՝ շվերական, կաղամքի, սփիի, սեխի ճանճերը և այլն: Այլ կարճաբեղ ճանճեր (թախիներ) միջատների տարբեր կարգերի, հիմնականում թիթեռների թրթուրների գիշատիչներ են և ընտանի կենդանիների վնասատուներ (ծիու, ոչխարի, եզան կաշվի, ստամոքսային բռութը): Սենյակային ճանճի թրթուրը սնվում է գոմաղրով և փտած մնացորդներով, իսկ հասուն ճանճը հեղուկ և կարծր նյութերով (վերջին դեպքում սնունդը թքով փափկացնում է և ապա լիզում): Տարածում է տարբեր հիվանդու-

թյուններ՝ որովայնային տիֆ, արյունոտ լուծ, տափակ ու կլոր որդերի ձվեր և այլն :




Նկ. 54. Կարճաբեղ ճանճեր.  
ա - քոռուկ, բ- բզզան ճանճ, ց- մոզ

ճանճերի տնտեսական և առողջապահական նշանակությունը շատ մեծ է: Շատ տեսակներ մշակովի բույսերի լուրջ վնասատուներ են, օրինակ՝ հացարույսերի (հեսսենյան ու շվեդական ճանճեր), բանջարեղենի (սոխի և կաղամբի ճանճեր), բանջարանոցային (սեխի ճանճ), պտղատու ծառերի (բալի ճանճ) և այլն: Որոշ տեսակներ ոչ պակաս նշանակություն ունեն անասնաբուծության մեջ և մարդու համար, օրինակ՝ մոծակները, քոռուկները, բոռը, մալարիայի մոծակը: Կան նաև սինանտրոպ տեսակներ, որոնք տարբեր վարակիչ, հատկապես աղեստամոքսային հիվանդությունների փոխանցողներ են:

#### Կարգ 25. Սազաքևավորներ կամ առվակայիններ (*Trichoptera*)


Միջին չափերի կամ մանր, 1.5-25 մմ երկարությամբ, թիթեռների նման միջատներ են: Գլուխս ուղղված է դեպի առաջ: Ունեն մեծ ֆաստային աչքեր և հաճախ 3 պարզ աչիկներ, որոնք գտնվում են գլխի վերևի մասում: Բեղերը երկար են, խողանակերպ (նկ.55):



Նկ.55. Առվակայիններ

Բերանային ապարատը ծծող տիպի է, վերին ծնոտները բացակայում են, ինչպես թեփուկաթևավորների մոտ է: Սակայն միշտ առկա են 3-5 հատվածներից կազմված ծնոտային շղափուկները: Ծամիչներն ու ծնոտները փափուկ են, թերզարգացած: Ունեն երկու զույգ թևեր: Թևերի քաղանթը մերկ է՝ հաճախ փայլուն կամ ծածկված խիտ մազիկներով: Դրանք հանգիստ վիճակում հարթ, տափակ ծալվում են մեջքի վրա:

Զարգանում են լրիկ կերպարանափոխությամբ: Թրթուրները որդաննան են, ապրում են ջրում, շնչում շնչափողային խոհիկներով: Ունեն կրծող տիպի թերանային ապարատ: Թրթուրներից շատերն իրենց մանող գեղձերի արտազատուկից, բույսերից և անօրգանական մասնիկներից կառուցում են խողովակածկ տնակներ, որտեղ ապրում են և հարսնյակավորվում (նկ.56): Սնվում են մոժակների թրթուրներով և մանր միջատներով:



Նկ. 56. Տարբեր տեսակի առվակայինների թրթուրները՝ իրենց տնակներով:


Դասուն առվակայինները հիմնականում ապրում են ջրամբարների շրջակայքում, իսկ թրթուրները՝ գլխավորապես հոսող մաքուր ջրերում: Առանձին տեսակներ անցել են լրիվ ցամաքային կենսակերպի: Էգերն անքև են: Առվակայինների թրթուրները որպես կեր ծառայում են արդյունագործական ձկնատեսակների համար: Դասուն ձևերը չեն սնվում: Այս կարգից Սևանա լճում նկարագրվել են 7 տեսակներ, որոնցից մեծ թվաքանակ ունեն 3-ը:

#### **Կարգ 26. Թեփուկաթևավորներ կամ թիթեռներ (*Lepidoptera*)**

Թիթեռները չափերով խիստ բազմազան են՝ 3-8մմ-ից մինչև 20-25 սմ թևերի բացվածքով: Գլուխը գնդածև է, ունեն խոշոր աչքեր և 2 պարզ աչիկներ: Բեղիկները երկար են, բազմահատված, կարող են լինել գնդասեղաննան, սղոցածև, խոզանակերպ, փետրածև: Արուների բեղերն ավելի լավ են զարգացած, որը պայմանավորված է դրանց հոտառական օրգանների ավելի լավ զարգացվածությամբ:

Թիթեռների բերանային ապարատը ծծող տիպի է: Վերին շրթունքը շատ փոքր է կամ բացակայում է: Վերին ծնոտները պահպանվել են միայն ցածրակարգ թիթեռների մոտ: Ստորին ծնոտների արտաքին բլթերը խիստ երկարացած են, հանգիստ վիճակում զսպանակածն ոլորված, ծծող կնճիթի տեսք ունեն: Ստորին շրթունքը թերզարգացած է, մնացել են միայն երեքհատվածանի շոշափուկները:

Առաջնակուրծքը կարծ է, միջնակուրծքը՝ ուժեղ զարգացած, հետնակուրծքն ավելի ուժեղ է առաջնակուրծքից և ավելի թույլ միջնակուրծքից: Թիթեռներն ունեն երկու զույգ թաղանթանման թևեր (քչերն անթև են), որոնք երկու կողմից պատված են տարբեր գույնի և ձևի մանրագույն թեփուկներով ու մազիկներով: Դրանցով է պատված նաև ողջ մարմինը: Թիթեռների թեփուկներն իրենց կառուցվածքով խիստ տարբերվում են այլ միջատների թեփուկներից (նկ. 57):



Նկ. 57. Թիթեռների տարբեր ձևի թեփուկներ

Առջևի թևերը սովորաբար ավելի խոշոր են ետևիններից: Թևերը գուրկ են խիտ ջղավորումից: Երկայնական ջղերի թիվը համեմատաբար ավելի մեծ է: Թևերի ձևն ու ջղավորումը թիթեռների տեսակների որոշնան համար ունի կարևոր կարգաբանական նշանակություն: Առանձին տեսակների առջևի ոտքերը թերզարգացած են: Թաթերը հինգհատվածանի են և վերջանում են երկու ճանկով: Առաջին սրունքի ներսի մակերեսին գրեթե միշտ կա խոզանակ, որով մաքրում են թեղերը: Սովորաբար միջին սրունքը կրում է մեկ, իսկ ետին սրունքը՝ երկու զույգ խթաններ: Առանձին տեսակներ ունեն փշեր: Փորիկը կազմված է 9-10 հատվածներից, որոնցից

Վերջին 2-3-ը ծևափոխվել են և ծառայում են որպես գուգավորման օրգան (նկ.58):

**Թիթեռներից շատերին բնորոշ է սեղական դիմորֆիզմը:** Եգը ավելի մեծ է, քան արուն: Արուն ունի համեմատաբար ավելի վառ գունավորում: Առանձին տեսակների եգեր չունեն լավ զարգացած թևեր կամ ամբե են:



Նկ. 58. Թիթեռ

Զարգանում են լրիվ կերպարանափոխությամբ: Եգերն հաճախ ծվաղորում են բույսերի վրա, երբեմն հողում՝ մեկական կամ խմբերով:

Թրթուրը որդաննան է, ունի լավ զարգացած գլուխ, կրծող բերանային ապարատ, մի քանի պարզ աչքեր, երեք զույգ կրծքային խևկական ոտքեր, հինգ զույգ փորային կեղծ ոտքեր: Ցածրակարգ թիթեռների խմբերում կեղծ ոտքերի թիվը երբեմն հասնում է 7-8 զույգի: Այդպիսի թրթուրները ննանվում են սղոցարարների կեղծ թրթուրներին (նկ.15գ):

Թրթուրների մարմինը մերկ է կամ մազապատ, երբեմն՝ վառ գունավորված: Դարսնյակը փակ տիպի է և անշարժ: **Թիթեռների թրթուրները ֆիտոֆագ են՝ սնվում են բույսերի տարբեր մասերով,** հիմնականում տերևներով, որի պատճառով թիթեռները համարվում են գյուղատնտեսական մշակովի բույսերի վտանգավոր վնասատու-ներ (նկ.15ե):

Թիթեռները սնվում են ծաղիկների քաղցր հյութով կամ չեն սնվում: Դասուն ծների կյանքը երկարատև չէ՝ մեկ ամսից ոչ ավելի:

Թրթուրներն անհամեմատ երկարակյաց են, երբեմն ապրում են 1 տարուց ավելի: Իսկ առանձին տեսակների հարսնյակային շրջանը կարող է տևել մի քանի տարի, ինչպես օրինակ՝ *սիրամարգի աչքը* (*Saturnia pyri*):

Թիթեռները շատ բազմազան են: Կարգը հարուստ է տեսակներով, որոնք տարածված են ամենուրեք: Ըստ կենսակերպի բաժանվում են 2 խոշոր խմբի՝ *գիշերային* և *ցերեկային*:

**Գիշերային թիթեռները** ցերեկը բաքնվում են և միայն մթնշաղին ու գիշերային ժամերին ակտիվ թռչում են, սնվում, զուգավորվում և ծփադրում: Գունավորումը միապաղադ է, հիմնականում՝ մուգ մոխրագույն:

**Ցերեկային թիթեռներն** ունեն վառ, խայտաբղետ գունավորում, չափերով ավելի մեծ են, ակտիվ են միայն պայծառ արևի ժամանակ, իսկ մթնշաղին և գիշերը բաքնվում են: Թիթեռների կարգը բաժանվում է 3 ենթակարգերի՝

1. *Ստորակարգ հավասարաքն թիթեռներ* (*Microjugata*):
2. *Բարձրակարգ հավասարաքն թիթեռներ* (*Macrojugata*):
3. *Տարաքն թիթեռներ* (*Treurata*):

Այս ենթակարգերն իրարից տարբերվում են թևերի ջղավորմամբ և նեղ մասնագիտական հատկանիշներով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղդասարյան Բ. Ա . Միջամտեր. Ուղեցույց. Երևան, 1965.
2. Бондаренко Н.В., Глушченко А.Ф. Практикум по общей энтомологии Л.: "Колос", 1972. 343 с.
3. Бей-Биенко Г.Я. Общая энтомология М.: "Высшая школа", 1971. 495 с.
4. М.С. Гиляров Жизнь животных М.: "Просвещение", Том III, 1984. 462 с.
5. Догель В.А. Зоология беспозвоночных М.: "Высшая школа", 1981. 605 с.
6. Мамаев Б.М., Медведев Л.Н. Определитель насекомых европейской части СССР М.: "Просвещение", 1976. 302 с.
7. Росс Г., Росс Ч., Росс Д. Энтомология М.: Мир 1985. 572 с.
8. Фролова Е.Н., Щербина Т.В. Практикум по зоологии беспозвоночных М.: "Просвещение", 1985. 226 с.
9. Шалапенок Е.С., Буга С.В. Практикум по зоологии беспозвоночных Минск ООО "Новые знания", 2002. 272 с.
10. Биология. Под ред. акад. РАМН В.Н. Ярыгина М.: "Высшая школа", 2003. 334 с.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻԶԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՍՈՒԹՅՈՒՆԸ .....	3
ՄԻԶԱՏՆԵՐԻ ՄԱՐՄԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....	5
ՄԻԶԱՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ .....	20
ԻՆՉՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՂԱՎԱՔԵԼ ՄԻԶԱՏՆԵՐԻՆ .....	22
ՈՐՈՇԻՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ .....	23
ԹԵՎԱՎՈՐ ՂԱՍՈՒՆ ՄԻԶԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՈՐՈՇԻՉ	24
ՄԻԶԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ .....	31
Կարգ 1. ճպուռներ (Odonata) .....	31
Կարգ 2. Միօրյակներ (Ephemeroptera) .....	33
Կարգ 3. Խավարասերներ (Blattoptera) .....	34
Կարգ 4. Աղոքարարներ (Mantoptera) .....	36
Կարգ 5. Տերմիտներ (Isoptera) .....	37
Կարգ 6. Ցատկող ուղղաթևեր (Orthoptera) .....	38
Կարգ 7. Չողիկանմաններ կամ ուրվականներ (Phasmodaea) .....	43
Կարգ 8. Գարնանայիններ (Plecoptera) .....	43
Կարգ 9. Էմբիններ (Embiodea) .....	44
Կարգ 10. Մաշկաթևավորներ կամ ականջնուկներ (Demaptera) .....	46
Կարգ 11. Բշտիկառտանիններ կամ տրիպսներ (Trisanoptera) .....	47
Կարգ 12. Խոտհարներ (Copeognatha, Psocoptera) .....	48
Կարգ 13. Փետրակերներ (Mallophaga) .....	50
Կարգ 14. Ոզիլներ (Anoplura) .....	50
Կարգ 15. Ղավասարաք կնճիթավորներ (Homoptera) .....	52
Կարգ 16. Կիսակարծրաքնավորներ (Heteroptera) .....	57
Կարգ 17. Կարծրաթևավորներ կամ բգեզներ (Coleoptera) .....	59
Կարգ 18. Լվեր (Aphaniptera) .....	62

Կարգ 19. Մեծքևանիներ կամ կախքևանիներ (Megaloptera).....	63
Կարգ 20. Ուղտիկներ (Raphidioptera).....	64
Կարգ 21. Ցանցաթևավորներ (Neuroptera).....	64
Կարգ 22. Թաղանթաթևավորներ (Hymenoptera) .....	66
Կարգ 23. Կարիճաճանճեր (Mecoptera).....	69
Կարգ 24. Երկթևանիներ կամ ճանճեր (Diptera) .....	70
Կարգ 25. Մազաթևավորներ կամ առվակայիններ (Trichoptera).....	74
Կարգ 26. Թեփուկաթևավորներ կամ թիթեռներ (Lepidoptera).....	75
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	79

**ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՐԻՒԶԱ ԿՈՆՍԱՍՏԻՆԻ  
ԵՂԻԱԶՄՅԱՆ ԷՂՈՒՄՅՈՒ ՄՈՒՐԱՅԻ**

## **ՄԻՋԱՏՆԵՐ**

**Ուսումնական ձեռնարկ**

**Համակարգչային ձևավորումը՝ Է.Մ. Եղիազարյանի**

**Ստորագրված է տպագրության 04.05.2009 թ.:**

**Չափսը՝  $60 \times 84^{1/16}$  : Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 4.0 մամուլ,**

**տպագր. 5.0 մամուլ՝ 4.65 պայմ. մամուլի:**

**Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 48:**

**ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մամուլյան 1:**

---

**Երևանի պետական համալսարանի  
օպերատիկ պոլիգրաֆիայի ստորաբաժնում  
Երևան, Ալ. Մամուլյան 1:**